



ԴԱՍԸՆԹԱՑ ԴԱՍԱԳԻՐՔ

ԷԹՆԻԿ

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ

ԵՎՐՈՊԵԻԶԱՑԻԱ

Նոյեմբեր | 2020



საპარლამენტო კვლევების ინსტიტუტი
GEORGIAN INSTITUTE OF POLITICS



With the support of the
Erasmus+ Programme
of the European Union

**More Europe
in Georgia**



Դասընթաց դասագիրք

Էթնիկ փոքրամասնությունները Վրաստանում և Եվրոպեից

Նույնբեր | 2020

Դասընթացի ձեռնարկը մշակված է Վրաստանի քաղաքականության ինստիտուտի նախաձեռնությամբ (GIP)՝ նույն ինստիտուտի խորհրդի անդամ Գիորգի Սորդիայի և քաղաքականության վերլուծաբան Սալոմե Մինեսաշվիլիի հեղինակությամբ՝ Էրազմուս + Ժան մոնե ծրագրի «Խրախուսիր և գործիր հանուն Եվրոպայի»-ի շրջանակներում, որը ֆինանսավորված է Եվրախորհրդի կողմից:

Դասընթացի ձեռնարկի մշակմանը իրենց դերն են ունեցել Եվրախորհրդի և Էթնիկ փոքրամասնությունների հարցերով փորձագետները.

Գիորգի Սորդիա - Էթնիկության և բազմամշակութայնության ուսումնասիրման կենտրոն (CSFM)

Իվանե Չխիկվաձե - Բաց հասարակություն. Վրաստան (OSGF)

Նինո Մարջանիշվիլի - Թբիլիսիում Էրազմուսի ուսանողների ցանց (ESN)

Կորնելի Կակաչիա - Վրաստանի քաղաքականության ինստիտուտ (GIP)

Էլենե Փանչուլիձե - Եվրոպայի քոլեջ (Բրյուգե, Բելգիա)

Նաթիա Դադելիշվիլի - Կովկասի տնտեսական և սոցիալական հետազոտման ինստիտուտ (CIESF)

Վրացերենից հայերեն թարգմանությունը՝ **Նորիկ Գասպարյան**

Վրաստանի քաղաքականության ինստիտուտը (GIP) շահույթ չհետապնդող, անկուսակցական, հետազոտական և վերլուծական կազմակերպություն է: Վրաստանի քաղաքականության ինստիտուտը փորձում է Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների կազմակերպչական հիմքերի հզորացումն և արդյունավետ կառավարման սկզբունքների զարգացումը՝ քաղաքական հետազոտությունների միջոցով:

«Հրապարակումը պատրաստված է Եվրահանձնաժողովի աջակցությամբ: Դրանում տեղ գտած կարծիքները պատկանում են հեղինակին: Եվրահանձնաժողովը և Վրաստանի քաղաքականության ինստիտուտը պատասխանատու չեն նյութի բովանդակության համար»:

“The European Commission support for the production of this publication does not constitute endorsement of the contents which reflects the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.”

© Georgian Institute of Politics, 2020

13 Aleksandr Pushkin St, 0107 Tbilisi, Georgia

Tel: +995 599 99 02 12

Email: info@gip.ge

For more information, please visit

www.gip.ge

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

03	ՆԱԽԱԲԱՆ
04	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
06	ԴԱՍԱԳՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԹՐԵՅՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ
07	ԹԵՄԱ 1: ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՁԵՒԱԶԱՓԵՐ
08	1.1. Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպեիզացիան. մարտահրավերներ և հեռանկնարներ
11	1.2. Եվրամիության հարևանության քաղաքականությունը և Արևելյան գործընկերություն. Ինչ են ենթադրում նշված ձևաչափերը Վրաստանի համար
14	ԹԵՄԱ 2: ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ
15	2.1. Փոքրամասնությունների իրավունքներն ու պարտականությունները՝ Եվրոպական քաղաքականության ուղղությամբ
17	ԹԵՄԱ 3: ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԵՐ
18	3.1. Ազատ առևտուր՝ Եվրամիության հետ
20	3.2. Առանց մուտքի արտոնագրի ռեժիմ՝ Եվրամիության և Շենգենյան գոտու հետ
23	3.3. Կրթական ծրագրեր՝ Եվրամիության հետ
25	ՀԱՎԵԼՈՒՄ 1: ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐԻ ՑԻԿԼ
27	ՀԱՎԵԼՈՒՄ 2: ԹՐԵՅՆԻՆԳՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՒԱԶԱՓ
31	ՀԱՎԵԼՈՒՄ 3: ՀՐԱՀԱՆԳ (ԻՆՍՏՐՈՒԿՑԻԱ)՝ ԹՐԵՅՆԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ
33	ՀԱՎԵԼՈՒՄ 4: ԹՐԵՅՆԻՆԳԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

Սույն դասագիրքը ստեղծվել է Եվրամիության Erasmus+ և Ժան Մոնեի ծրագրում ֆինանսավորված՝ «Խրախուսիր և գործիր հանուն Եվրոպայի» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ խրախուսել Եվրամիության հետ կապված քննարկումները՝ Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում՝ Եվրաինտեգրման մասին տեղեկատվության տարածման տեսքով:

Դասագիրքը նախատեսված է Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում քաղաքացիական հասարակության և կրթության ոլորտից ընտրված թրեյնիերների համար, որպեսզի նրանք հետագայում կարողանան տեղի բնակչությանը պատրաստել և Եվրամիության վերաբերյալ տեղեկատվություն տարածել: Այդ նպատակով՝ դասագիրքը ներկայացված է վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն: Դասագիրքը հրապարակելուն նախորդել են ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում դաշտային հետազոտություններ և աշխատանքային հանդիպումներ՝ տեղի բնակչության հետ: Դասագրքի կոնկրետ թեմաներ ընտրվել են հենց վերոնշյալ հետազոտությունների արդյունքում: Դասագրքի բովանդակության և թիրախային լսարանին հասցնելու մեթոդներ ստեղծելուն մասնակցել են Եվրամիության և Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների թեմաներով փորձագետներ, ովքեր նույնպես կանցկացնեն պիլոտային թրեյնինգներ:

Ծրագրի հիմնական թիրախային խմբերը Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում առկա քաղաքացիական հասարակությունն ու լրատվամիջոցներն են, նաև ուսուցիչներն ու տեղական ինքնակառավարման մարմինները: Թիրախային շրջանները ընտրվել են՝ Վրաստանում ազգային և կրոնական փոքրամասնություններով բնակեցված շրջաններն ու քաղաքացիական ինտեգրման խնդիրները հաշվի առնելով: Ծրագրի շրջանակներում հաշվի է առնվել ոչ միայն Եվրոպայի քաղաքականության վերաբերյալ քննարկումների խրախուսումը և համապատասխան թրեյնինգները՝ թիրախային լսարանի համար, այլ նաև փոքրամասնությունների խնդիրների բարձրաձայնումը, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում:

Վրաստանը էթնիկ առումով ամենաբազմազան պետություններից մեկն է Եվրոպայում: Վերջին մարդահամարի համաձայն, որը տեղի է ունեցել 2014 թվականին, բնակչության 13.2 տոկոսը ազգային փոքրամասնություններ են՝ այդ թվում թվով ամենամեծ խմբերն են ադրբեջանցիները (6.2 տոկոս) և հայերը (4.5 տոկոս), որոնք կոմպակտ բնակեցված են երկրի հարավային շրջաններում (Քվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախեթիում): Մնացած էթնիկ խմբերը կոմպակտ բնակավայրեր ավելի քիչ են ստեղծում և բնակեցված են տարբեր շրջաններում ու քաղաքային կենտրոններում: Երկրում ազգային փոքրամասնություններն ու մշակութային բազմազանության թեմաների առկայությունը Վրաստանի իշխանության համար կարևոր մարտահրավերներից մեկն է դարձել: Գլխավոր մարտահրավերը աղեկվատ և արդյունավետ քաղաքացիական ինտեգրման քաղաքականություն վարելն է: Այս քաղաքականությունից է կախված, թե որքանով կկարողանա վրաց քաղաքական օրգանիզմը ներգրավվածության, հավասարության և բազմակարծության վրա հիմնված պետություն ստեղծել:

Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ու նրանց լիարժեք ինտեգրումը հասարակության մեջ՝ Վրաստանի եվրոպական քաղաքականության կարևորագույն ասպեկտներից մեկն է: Այս մոտեցումը հստակ նշված է տարբեր եվրոպական ինստիտուտների հետ՝ Վրաստանի համագործակցության փաստաթղթերում: Ազգային փոքրամասնությունների հետ կապված թեմատիկան կարևոր տեղ է զբաղեցնում ինչպես Եվրամիության հետ ստորագրված Ասոցացման համաձայնագրի, այնպես էլ Եվրախորհրդի և ԵԱՀԿ շրջանակներում Վրաստանի կողմից ստանձնած պարտավորություններում: Այդ թվում, հատկապես ուշագրավ է Եվրախորհրդի կողմից նախաձեռնած՝ փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, որը իրավաբանորեն պարտադիր գործիքակազմ է ենթադրում ստորագրած երկրների և, հետևաբար, առաջնային միջազգային մեխանիզմ է ներկայացնում՝ փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու համար:

Վրաստանը, որի համար Եվրոպական ուղղվածությունը քաղաքական գերակա առաջնահերթություն է ներկայացնում, պարտավոր է ներգրավվածության և ինտեգրման ուղղությամբ ծրագրեր իրականացնել՝ ազգային փոքրամասնությունների հետ կապված: Դրա արտացոլումն է համապատասխան եվրոպական ինստիտուտների հետ զեկույցների մեխանիզմների ստեղծումը և ներքին իրավական գործիքակազմի ապահովումը, որն ուղղված է էթնիկ փոքրամասնությունների խնդիրները հայտնաբերելու և նրանց ինտեգրման համար համապատասխան միջոցներ ընդունելուն: Այս նպատակը բավարարելու համար, 2005 թվականից Վրաստանում գործում են փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման և հանդուրժողականության ազգային հայեցակարգը և համապատասխան գործողությունների ծրագրերը: Հայեցակարգը հետևյալ ընդհանուր նպատակներին հասնելուն է ուղղված. Հավասար և լիարժեք մասնակցություն՝ քաղաքացիական և քաղաքական կյանքում, հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում, որակյալ կրթության հասանելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում, ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժող միջավայրի ապահովում:

Այնուամենայնիվ, Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների միջև իրազեկության մակարդակը, ինչպես Վրաստանի եվրոպական քաղաքականության, այնպես էլ փոքրամասնությունների հետ կապված ծրագրերի վերաբերյալ չափազանց ցածր է, ինչը բացասաբար է ազդում երկրի անվտանգության և հանրության մեջ եվրոպական արժեքների տարածման վրա: Ներկայացված դասընթացների ուղեցույցի ստեղծումը պայմանավորված է այս հիմնական պարտահրավերների առկայությամբ և նպատակ ունի՝ բարձրացնել ազգային փոքրամասնությունների շրջանում Եվրամիության վերաբերյալ տեղեկացվածությունը:

Վերապատրաստման նյութը միավորում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքներ՝ ԵՄ-Վրաստան ասոցացման համաձայնագրով նախատեսված օգուտներից օգտվելու համար: Առաջին թեման վերաբերում է Եվրամիության և Վրաստանի Եվրոպական քաղաքականության տեսական շրջանակ և ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսին է Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպեիզացիան և կից մարտահրավերներն ու հեռանկարները, Եվրամիություն-Վրաստան համագործակցության ձևաչափերը և դրանց էությունը: Երկրորդ թեման վերաբերում է կոնկրետ էթնիկ փոքրամասնությունների դերին և իրավունքներին՝ Վրաստանի եվրոպական քաղաքականության շրջանակներում: Երրորդ թեման հիմնականում գործնական հարցեր է ներառում, թե ինչպես են կարող Վտաստանի քաղաքացիները այնպիսի բենեֆիտներից օգտվել, ինչպիսին է Եվրամիության հետ ազատ առևտուրը, առանց մուտքի արտոնագրի ռեժիմը և կրթական փոխանակման ծրագրերը:

ՁԵՌՆԱՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ներկայացված ուղեցույցը նախատեսված է էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջաններից (Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլի) ընտրված դասընթացավարների համար, ովքեր համապատասխան թիրախային խմբերում դասընթացներ կանցկացնեն՝ Վրաստանի եվրոպական քաղաքականության և փոքրամասնությունների խնդիրների վերավերյալ: Ուղեցույցը ներկայացնում է օժանդակ նյութեր նշված դասընթացավարների համար, որն ընդգրկում է յուրաքանչյուր թեմայի հիմնական բովանդակային ասպեկտները և նյութը տրամադրելու շրջանակը: Ձեռնարկում նկարագրված են դասընթացների ընդհանուր նպատակները, ակտուությունը, քննարկվող հարցերի ակնարկն ու օգտակար աղբյուրներ: Հավելումների տեսքով՝ ձեռնարկը ուղեկցում է գործնական տեղեկատվություն: Մասնավորապես՝ դասընթացների ժամանակացույց, դասընթացների վերապատրաստման փուլեր, գնահատման ձևեր, ցուցումներ ու դասընթացների հավելյալ նյութեր: Վերջինս ներառում է համառոտ տեղեկատվություն՝ դասընթացներին ներկայացված յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ, դասընթացների ընդհանուր կառուցվածքի սեսիաներ և դրանց տևողության վերաբերյալ:

Դասընթացը սկսելուց առաջ անհրաժեշտ է, որ դասընթացավարները լավ պատկերացնեն դասընթացի ընդհանուր նպատակներն ու ակնկալվող արդյունքները, հարցերի քննարկման ժամանակ կենտրոնանան Վրաստանի եվրոպական քաղաքականության և Վրաստանում եվրոպական քաղաքացիական արժեքների հաստատման վրա: Մինչ դասընթացները պլանավորելը խորհուրդ է տրվում պատմել դասընթացի ցիկլի (հավելված 10) կառուցվածքի մասին: Ներկայացված թեմաները և լրացուցիչ նյութերը ընդհանուր ուղղվածություն են տալիս, թեև դասընթացավարները կարող են յուրաքանչյուր թեմայի վերբերյալ ուրվագիծը հարմարեցնել համապատասխան լսարանին՝ հետևելով ցուցումներին (հավելված 3): Թեմայն ընդլայնելու կամ մեղիֆիկացման գործընթացում լրացուցիչ գործառույթ են իրականացում օգտակար աղբյուրները: Դասընթացի վերջում խորհուրդ է տրվում մասնակիցների գնահատման ձևաչափի օգտագործում (հավելված 2)՝ դասընթացը բարելավելու և կատարելագործելու նպատակով:

Ձեռնարկում նշված դասընթացները բաժանված են երեք օրվա, որի ընթացքում դասընթացավարները կարող են ընտրել 6-ից 5 թեմա և համապատասխան՝ դրանց հաջորդականությունը: Դասընթացների բաշխումը, խորհուրդ է տրվում, ծրագրել հետևյալ կերպ.

Օր 1. Ներածություն. Թեմա 1

Օր 2. Թեմա 2 և 3

Օր 3. Թեմա 4 և 5, եզրակացություն



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԹԵՄԱ 1: ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՒ
ՎՐԱՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԵՒԱԶԱՓԵՐԸ

1.1. Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպեիզացիան Մարտահրավերներ և հեռանկարներ

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ մասնակիցներին տեղեկատվություն տրամադրել Վրաստանի արտաքին քաղաքականության ընթացիկ մարտահրավերների վերաբերյալ: Ինչպես նաև, մասնակիցները կծանոթանան երկրի եվրոպեիզացիայի հեռանկարների և խոչընդոտող գործոնների, ինչպես նաև, մինչ այժմ գրանցված առաջընթացին: Բացի դրանից՝ դասընթացը նպատակ ունի մասնակիցներին տալ գաղափար՝ ոչ միայն Վրաստանի հեռանկարների, այլև Եվրամիության երկրների հեռանկարների վերաբերյալ՝ երկրի եվրաինտեգրման տեսանկյունից: Եվ վերջում, դասընթացի շրջանակներում մասնակիցները կծանոթանան Վրաստանի՝ Եվրաինտեգրման հավանական մոդելներին և տեղեկատվություն կստանան տարածաշրջանային և անհատական ինտեգրման մոդելների վերաբերյալ՝ համեմատական հեռանկարներում:

Դասընթացի արդյունքները

Դասընթացը ավարտելուց հետո, մասնակիցները կարող են ինքնուրույն քննարկել Վրաստանի եվրաինտեգրման գործընթացը և նշված ուղղությամբ երկրի կողմից գրանցված առաջընթացի ու առկա մարտահրավերներն ինդենտիֆիկացնել: Բացի դրանից՝ դասընթացն ավարտելուց հետո, մասնակիցները կարող են երկրի եվրաինտեգրման և եվրոպեիզացիայի գործընթացի հետ կապված վրացական և եվրոպական գործընթացների համեմատական վերլուծություն անել: Վերջապես, դասընթացի շրջանակներում վիճակագրական տվյալները մշակելու արդյունքում, նրանք կարող են եվրաինտեգրման գործընթացի հետ կապված վիճակագրական տվյալներին ծանոթանալ և ուղղակիորեն կապել խնդրի հետ:

Թեմայի նկարագրություն

Մոտ երկու տասնամյակ է, ինչ Վրաստանն ավելի ինտենսիվորեն է աշխատում եվրոպական ինտեգրման ուղղությամբ, քան այլ հետխորհրդային երկրները (բացառությամբ Բալթյան երկրների): Նշված գործողության նպատակը կայուն քաղական ինստիտուտների զարգացումը, կայուն անվտանգությունն ու ժողովրդավարական համակարգի ձևավորումն է: Վրաստանը տարիներ առաջ հրապարակայնորեն նպատակ է դրել՝ ստեղծել օրենքի գերակայություն և ժողովրդավարական ինստիտուտներ: Եվրամիության հետ 2014 թվականի հունվարի 24-ին Ասոցացման համաձայնագիրը ստորագրելով՝ Վրաստանը պարտավորություններ է վերցրել մարդու իրավունքների, դեմոկրատիզացիայի և «լավ կառավարման» Եվրամիության իրավական համակարգին համապատասխանեցնելու ուղղությամբ: Համաձայնագիրը Վրաստանին ոչ միայն մոտեցրել է Եվրամիությանը, այլ նաև նորովի հաստատել է նրա՝ որպես Հարավային Կովկասում արևմտամետ ներգրավվածության տեսանկյունից և Արևելյան գործընկերության տեսանկյունից գրավիտացիոն կենտրոնի դիրքորոշում:

Վրաստանի եվրաինտեգրման գործընթացը խթան է հանդիսացել ներքին դրական բարեփոխումների՝ կառավարման և դեկոմրատիզացիայի ուղղություններով: Թեև, այն ժամանակ, երբ Վրաստանի եվրաստլանտյան ձգտումները շարունակվում են քաղաքական մակարդակում, հանրային մակարդակում մենք բախվում ենք բավականին աճող, նկատելի հոգնածության՝ եվրոպական արժեքների տեսանկյունից: Երկրում ընթացող եվրոպեիզացիայի գործընթացի հիմնական թուլությունը կայանում է՝ վրացական և այլ եվրոպական հանրությունների միջև առկա բացթողումը, որն առաջացել է ընդհանուր փորձի բացակայության և ընդհանուր ժողովրդական քննարկումների մասնակցության փորձի պակասով: Վրաստանը, իր հռետորաբանությամբ, Եվրոպայի մաս է, սակայն, իրականում, երկրում կան շատ սահմանափակ գիտելիքներ և ըմբռնում կա՝ եվրոպական իրականության վերաբերյալ:

Քննարկվող հիմնական հարցերը

- Վրաստանի քաղաքական մարտահրավերներն ու հեռանկարները՝ եվրոպեիզացիայի գործընթացում
- Եվրոպական ինտեգրմանը հասնելու համար ձեռնարկված քայլերը
- Եվրամիության անդամ երկրների տեսանկյունից՝ Վրաստանի եվրոպական ինտեգրման հեռանկարները
- Վրաստանի եվրաինտեգրման մոդելները
- Տարածաշրջանային և անհատական ինտեգրում

Օգտակար աղբյուրներ և գրականություն.

1. Բ. Լեբանիձե, Վրաստանի եվրոպական ինտեգրում. Ի՞նչ է լինելու Արևելյան գործընկերությունից հետո. GIP, 2017. <http://gip.ge/ge/საქართველოს-ევროპული-ინტ/>
2. Զ. Լարսեն, Խնդիրային հարևանություն. Ինչպե՞ս պետք է Վրաստանը գերծ մնա ավտորիտար ռեժիմների ճնշումներից, GIP. 2018. <http://gip.ge/ge/პრობლემური-სამეზობლო-რო/>
3. Մ. Գրիգալაշվիլի և Մ. Սարջվելაձե, Վրաստանի վիզալիբերալիզացման մարտահրավերները. Քաղաքական կոնտեքստ և վիճակագրություն, GIP, 2018. <http://gip.ge/ge/საქართველოს-ვიზალიბერალ/>
4. Բ. Լեբանիձե և Լ. Փանչուլիձե, Եվրամիության հետ համագործակցությունը անցումային շրջանում. Ռազմավարություն Վրաստանի համար, GIP, 2018. <http://gip.ge/ge/ევროკავშირთან-თანამშრო/>
5. Լ. Կախիշվիլի, Ժողովրդավարական համախմբում Վրաստանում. Ինչու՞ է կոնսենսուսը կարևոր. GIP, 2018. <http://gip.ge/ge/დემოკრატიული-კონსოლიდაც/>
6. Փորձագետների մեկնաբանություններ #9, Ի՞նչ է նշանակում Ալբանիայի և Հյուսիսային Մակեդոնիայի հետ սկսած բանակցություններին դրված վետոն Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի եվրոպական ձգտումների համար. GIP, 2019. <http://gip.ge/ge/რას-ნიშნავს-აღბანეთთან-დ/>
7. Կ. Կակաչիա, Կ. Բետգերի, Բ. Լեբանիձե, Վ. Պալմ և Միխեիլ Սարջվելაձե, Վրաց-գերմանական հարաբերությունները եվրաստլանտյան ինտեգրման համատեքստում՝ Ինչպե՞ս ամփոփել սպասելիքները, GIP, 2019 <http://gip.ge/ge/ქართულ-გერმანული-ურთიერთ/>

8. Վրաստանի արտաքին գործերի նախարարություն. Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների կարևոր իրադարձությունների ժամանակագրություն.
<https://bit.ly/31avPgh>
9. Վրաստանի արտաքին գործերի նախարարություն. Եվրոպական և եվրասիական տյան ինտեգրում. Օգտակար տեղեկատվություն.
10. Վրաստանի արտաքին գործերի նախարարություն. Ացոցացման մասին համաձայնագիր <https://bit.ly/3gbtHZS>
11. ՆԱՏՕ-ի և Եվրամիության վերաբերյալ տեղեկատվական կենտրոն. Վրաստան և Եվրամիություն. <http://old.infocenter.gov.ge/georgia-and-the-european-union/>
12. ՆԱՏՕ-ի և Եվրամիության վերաբերյալ տեղեկատվական կենտրոն. Եվրամիության և Վրաստանի հարաբերությունները. Փաստեր և թվեր.
<http://old.infocenter.gov.ge/1655-evrokavshirsa-da-saqarthvelos-thanamshromloba-faqtebi-darickhvebi.html>

1.2. Եվրոպայի հարևանության քաղաքականություն և Արևելյան գործընկերություն. Ի՞նչ են ենթադրում նշված ձևաչափերը Վրաստանի համար

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում բնակչությանը տեղեկատվություն տրամադրել՝ Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների վերաբերյալ, հատկապես այն ձևաչափերի, որոնց շրջանակներում Վրաստանը համագործակցում է Եվրամիության հետ: Դասընթացը հակիրճ ամփոփում է Եվրամիության հարևանության քաղաքականությունը, նրա նպատակներն ու զարգացման փուլերը, ինչպես նաև Արևելյան գործընկերության նախաձեռնություններն ու դասընթացի մասնակիցներին բացատրել, թե ինչ է նշանակում Վրաստանի մասնակցությունը նման ձևաչափերում: Քաղաքական, տնտեսական և հանրությունների միջև կապերը ամրապնդելու տեսանկյունից: Այս բաղադրիչների շրջանակներում ներկայացված կլինի գործնական մասը, որը կօգնի ուսումնասիրել և վերլուծել Արևելյան գործընկերության նախաձեռնությունները՝ հիմնական ուղղություններով:

(1) Տնտեսական զարգացում և շուկաների ուսումնասիրում; (2) Ինստիտուտների հզորացում և լավ կառավարում; (3) Կապերի ամրապնդում, էներգաարդյունավետություն, Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխություններ; (4) Շարժունակություն և մարդկանց միջև կապեր:

Դասընթացի արդյունքները

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան. Հավաքել և վերլուծել տվյալներ/տեղեկատվություն դասընթացի թեմայի վերաբերյալ, պատրաստել աշխատություն՝ գրավոր տեսքով, դասընթացի շրջանակներում ստացած նյութերի հիման վրա պատրաստել զեկույց/դասընթաց, ազատ քննարկել/խոսել/ դասընթացների շրջանակներում քննարկված թեմաների վերաբերյալ, պատասխանել դասընթացի թեմաների հետ կապված հարցերին և մեկնաբանություններին, անկախ ուսումնասիրել դասընթացի ժամանակ քննարկված Եվրամիություն-Վրաստան հարաբերությունների տարբեր ուղղություններ, անհրաժեշտության դեպքում անկախ գտնել/ճշտել տեղեկատվություն՝ Եվրամիության հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության գործանթացում Եվրամիության դերի վերաբերյալ, պատրաստել գործնական աշխատանքներ դասընթացների շրջանակներում ստացված նյութերի վրա հիմնվելով:

Թեմայի նկարագրությունը

Եվրոպայի Հարևանության քաղաքականությունը մշակվել է 2004 թվականին՝ 10 նոր երկրի անդամագրությունից հետո և նրա նպատակը Եվրոպայի նոր բաժանարար գծերից խուսափելն էր: Այս քաղաքականության շնորհիվ Եվրամիությունն իր հարևաններին առաջարկում է արտոնյալ հարաբերություններ, որոնք հիմնված են ընդհանուր արժեքներով պայմանավորված ձգտումների վրա (Ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, լավ կառավարում, շուկայական տնտեսության սկզբունքներ և կայուն զարգացում): Եվրոպայի հարևանության քաղաքականությունը վեր է գոյություն ունեցող հարաբերությունների սահմաններից և գործընկերներին բարեփոխումների ճանապարհով ավելի խորը քաղաքական հարաբերություններ և տնտեսական ինտեգրում է առաջարկում: Հենց այս բարեփոխումներն են խաղաղության, կայունության և տնտեսական բարեկեցության հասնելու միջոցները: Եվրոպայի հարևանության քաղաքականությունը ներառում է Եվրամիության ուղղակի հարևան երկրները, որոնք նրա հետ ցամաքային կամ ծովային սահման ունեն, այդ թվում՝ Վրաստանը: Արևելյան գործընկերությունը (EaP) իրենց ներկայացնում է կոլեկտիվ քաղաքական նախաձեռնություն, որը նպատակ ունի՝ հարաբերությունները խորացնել և հաստատել Եվրամիության, նրա անդամ երկրների և նրա արևելյան 6 հարևանների միջև, որոնք են՝ Հայաստանը, Ադրբեյջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: Այս համատեքստում Եվրամիության հարևանների հետ հարաբերությունների, Եվրամիության գլոբալ ռազմավարության և Եվրոպայի նորացված հարևանության քաղաքականության ուղեցույցն է, որը ուղղված է Եվրամիության արևելյան գործընկերության կայունության ավելացմանը: Այս համատեքստում գոյություն ունի տարածաշրջանում բնակվող քաղաքացիների զգալի արդյունքների ապահովման միասնական պատասխանատվություն:

Այս նպատակներին հասնելու համար, Ռիգայում, 2015 թվականին Արևելյան գործընկերության գագաթնաժողովում ձեռք բերված համաձայնության համաձայն, համագործակցությունը հիմնվեց 4 հիմնական առաջնահերթային ոլորտին, որոնք են. Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ, ինստիտուտների հզորացում և լավ կառավարում, կապի ամրապնդում, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխություններ, շարժունակություն և կապ՝ ժողովուրդների միջև: Բացի դրանից, իրականացվում են կառուցվածքային փոփոխություններ՝ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և խտրականությունը վերացնելու նաև, ավելի հստակ և անհատական ռազմավարական հաղորդակցման քաղաքականություն վարելու համար:

Քննարկվող հիմնական թեմաները

- Եվրամիություն-Վրաստան հարաբերությունների ձևաչափերը
- Եվրոպայի հարևանության քաղաքականությունը
- Արևելյան գործընկերության քաղաքականությունը

Օգտակար աղբյուրներ

1. Մ. Էմերսոն և Թ. Կովզիրիձե. Վրաստանն ու Եվրամիությունը. Հակիրճ ուղեցույց.
<http://www.dcfta.gov.ge/public/filemanager/publications/pub2.pdf>
2. EU Neighbours. Արևելյան գործընկերությունն 2020 թվականից հետո. Կենսունակության ամրապնդում. Արևելյան գործընկերություն բոլորի համար:
https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2020-03/EaP%20joint%20communication_factsheet4_GE.pdf
3. EU4Business. Արևելյան գործընկերությունն <https://eu4business.eu/ka/agmosavletis-partnioroba>
4. Բ. Լեբանիձև և Է. Փանչուլիձե. Հարբերությունները Եվրամիության հետ անցումային շրջանում. Ռազմավարություն Վրաստանի համար. GIP. <http://gip.ge/wp-content/uploads/2018/05/PrintEleneBidzinaGEO.pdf>



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԹԵՄԱ 2: ԱԶԳԱՅԻՆ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Փոքրամասնությունների իրավունքներն ու պարտավորությունները՝ եվրոպական քաղաքականության համատեքստում

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ մասնակիցներին ներկայացնել ազգային և էթնիկ փոքրամասնությունների ընդհանուր իրավունքները: Նաև, թե ի՞նչ դեր ու տեղ ունեն փոքրամասնությունները եվրոպական քաղաքականության համատեքստում, որո՞նք են փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և ինտեգրման եվրոպական քաղաքականության նպատակները, և ի՞նչ միջազգային ու տեղական պարտավորություններ ունի երկիրը եվրոպական ինստիտուտներում ինտեգրման գործընթացում: Դասընթացը նաև էթնիկ և ազգային փոքրամասնությունների բնապատկերը ներկայացնելու և նրանց մարտահրավերներին ծանոթանալու նպատակ ունի:

Դասընթացի արդյունքները

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան ճշգրիտ բացահայտել ինչպես Վրաստանում, այնպես էլ Եվրոպայի մասշտաբով փոքրամասնություններին, բացահայտել նրանց կարիքներն ու խնդիրները, գնահատել փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար արված քայլերն ու իրականացված ծրագրերը: Մասնակիցները կիմանան, թե միջազգային ի՞նչ գործիքակազմեր գոյություն ունեն՝ փոքրամասնությունների պաշտպանության և ինտեգրման տեսանկյունից, Վրաստանը ի՞նչ պարտավորություններ ունի այս ոլորտում և ինչպե՞ս են իրականանում դրանք: Դասընթացի մասնակիցները նաև կկարողանան ճշգրիտ իմանալ Վրաստանի բազմազանության պատկերը՝ ներառյալ կոնկրետ էթնիկ խմբերի բնակավայրերը՝ համապատասխան վիճակագրական տվյալների ուսումնասիրության հնարավորություն կունենան:

Թեմայի նկարագրությունը

Վրաստանը բազմազգ երկիր է: Բնակչության վերջին մարդահամարի համաձայն, որը անց է կացվել 2014 թվականին, բնակչության 13.2 տոկոսը ազգային փոքրամասնություններ են, այդ թվում ամենամեծ խումբը ադրբեջանցիներն (6.2%) ու հայերն (4.5%) են, որոնք կոմպակտորեն են բնակեցված երկրի հարավային շրջաններում (Քվեմո-Քարթլի և Սամցխե-Ջավախեթիի շրջաններում): Մնացած էթնիկ խմբերը ավելի քիչ են կոմպակտ բնակավայրեր ստեղծում և բնակեցված են տարբեր շրջաններում և քաղաքային բնակավայրերում: Նման բազմազանությունը հաշվի առնելով՝ երկիրը իրականացնում է փոքրամասնությունների պաշտպանման և ինտեգրմանը ուղղված քաղաքականություն, ինչը համապատասխանում է նաև Վրաստանի եվրոպական քաղաքականության հետ: Ինչպես Եվրամիության, այնպես էլ եվրոպական այլ ինստիտուտների համար, փոքրամասնությունների իրավունքները կարևոր արժեքներ են: Այս խնդիրները հաշվի առնելով՝ դասընթացը կենտրոնացված կլինի 4 հիմնական հարցերի վրա:

Մասնավորապես՝, ինչպիսի՞ն է փոքրամասնությունների միջազգային իրավական սահմանումը, ո՞վ է համարվում ազգային փոքրամասնություն, ինչպե՞ս է սահմանվում փոքրամասնությունների իրավունքները Եվրոպայում և ի՞նչ պարտավորություններ ունեն եվրոպական տարբեր ինստիտուտները, փոքրամասնությունների պաշտպանման և բազմազանության կառավարումը ապահովելու համար ի՞նչ տեղական պարտավորություններ կան Վրաստանում, փոքրամասնությունների պաշտպանման միջազգային իրավական մեխանիզմներն ու դրանց կիրառումը Վրաստանում:

Քննարկվող հիմնական թեմաները

- Փոքրամասնությունների հայեցակարգի միջազգային իրավական սահմանում (ինչպե՞ս են սահմանվում էթնիկ և ազգային փոքրամասնությունները, ի՞նչ տարբերություն կա այս երկու հասկացությունների միջև, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանման և ինտեգրման ի՞նչ միջազգային մոդելներ կան: Մոդելները կքննարկվեն տարբեր երկրների փորձով և քաղաքական ավանդույթները հաշվի առնելով):
- Փոքրամասնությունները Վրաստանում (Ովքե՞ր են էթնիկ և ազգային փոքրամասնությունները Վրաստանում, վիճակագրական տվյալներ և բնակեցման վայրեր, պետական քաղաքականությունը՝ փոքրամասնությունների հանդեպ, ինչպիսի՞ն է փոքրամասնությունների ընկալումը պետության կողմից և փոքրամասնությունների քաղաքականության ո՞ր միջազգային մոդելին է համապատասխանում այն):
- Փոքրամասնությունների քաղաքականության կառավարման միջազգային մեխանիզմներն ու դրանց իրականացումը: (Դասընթացի այս մասը հիմնականում կենտրոնացված կլինի եվրոպական միջազգային մեխանիզմների էության և դրանց կիրառման վրա: Մանրամասն ներկայացված կլինեն Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի համապատասխան կարգավորումները: Քննարկվող մեխանիզմների թվում են. Եվրախորհրդի ազգային փոքրամասնությունների պաշտպանման կոնվենցիան, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, ԵԱՀԿ թեմատիկ առաջարկությունները փոքրամասնությունների պաշտպանության և ինտեգրման տեսանկյունից: Կքննարկվեն յուրաքանչյուր միջազգային մեխանիզմի հիմնական նպատակները, որոնք ապահովում են այս մեխանիզմների գործնական իրականացումը՝ մասնակից պետություններում):
- Վրաստանի կողմից ստանձնած միջազգային և տեղական պարտավորությունները՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանման և ինտեգրման տեսանկյունից; ինչպե՞ս են իրականացվում այս պարտավորությունները, միջազգային մեխանիզմների հանդեպ ի՞նչ հաշվետվություն գոյություն ունի և ինչպիսի՞ն է այս գործընթացում տեղական՝ վրացական հասարակական կազմակերպությունների դերն ու գործառույթները: <http://csem.ge/interactivemap/>
- Minority Issues in Europe: Rights, Concepts, Policy. Edited by Tove H. Malloy. Frank & Timme 2013;
- Minority Issues Mainstreaming in the South Caucasus. A Practical Guide. European Centre for Minority Issues 2011;
- The Ljubljana Guidelines on Integration of Diverse Societies. OSCE HCNM, November 2012;
- Jean-Marie Woehrling. The European Charter for Regional or Minority Languages. A Critical Commentary. Council of Europe Publishing 2005;
- Filling the Frame – Five Years of Monitoring the Framework Convention for the Protection of National Minorities. Council of Europe Publishing 2004.



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԹԵՄԱ 3: ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԵ

3.1. Ազատ առևտուր՝ Եվրամիության հետ

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ մասնակիցներին համակարգված կերպով ծանոթացնել Վրաստան-Եվրամիության միջև առկա խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (DCFTA) շրջանակներում գոյություն ունեցող առավելություններին, այն հիմնական պահանջներին, որոնք պետք է բավարարի ապրանքը՝ ԵՄ շուկա արտահանման ժամանակ՝ սակագնային (բացառությամբ DCFTA-ի) և ոչ սակագնային խոչընդոտներ, մասնակիցների հմտութիւն ունենալը զարգացնել, որպեսզի իրենք կարողանան ուսումնասիրել և գնահատել ԵՄ միասնական շուկայում արտահանման հեռանկար ունեցող ոլորտներն ու կարողանան Եվրամիության շուկա արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերել:

Դասընթացի արդյունքները

Դասընթացի ավարտիտին մասնակիցները կկարողանան. Ամբողջովին գնահատել DCFTA-ն, DCFTA-ի նախապատվությունների օգտագործում Վրացական ծագման հիմնավորում (որպեսզի արտոնյալ ռեժիմ գործի) Որակի ենթակառուցվածքների պահանջների գնահատում Եվրամիության շուկայի մասնատում և կոնկրետ շուկաներ մուտք գործելու ռազմավարության մշակում Վիճակագրական տեղեկատվություն գտնելու և շուկաներ մուտք գործելու ու մրցակիցներին վերլուծելու հմտություն Եվրամիության շուկայում արտահանման ամողջ արժեքային շղթայի գնահատում:

Դասընթացի նկարագրությունը

Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտին երկիրը տեղափոխում է արտոնյալ առևտրային ռեժիմի և հնարավորություն է ստեղծում՝ մեծացնել շուկայի հասանելիությունը Վրաստանի և Եվրամիության միջև, ինչը միմյանց ներդաշակեցված կանոնակարգերի վրա է հիմնված: Մասնավորապես՝ «DCFTA»-ն հնարավորություն է տալիս վրաց գործարարներին՝ տեղադրել իրենց ապրանքն աշխարհի ամենամեծ՝ Եվրամիության միասնական շուկայում՝ առանց սակագնային արգելքների և քվոտաների: «DCFTA»-ի իրականացումը պահանջում է, որ Վրաստանը իր սանիտարական և ֆիտոսանիտարական օրենսգրքը համապատասխանեցնի ԵՄ օրենսդրությանը, ինչը նշանակում է, որ ընտրված ոլորտի բոլոր վրաց գործարարները պարտավոր են լինելու կատարել նոր պահանջները: Սա ոչ միայն կբարելավի ապրանքի որակն ու նրա անվտանգությունը սպառողների համար, այլև հնարավորություն կտա ապրանքը արտահանել համաշխարհային շուկա: Վրաց արադրանքի ԵՄ միասնական շուկա արտահանման հիմնական մարտահրավերները Եվրամիության բարձագույն ստանդարտներին անհամապատասխանելն ու արտադրական թերի շղթան է, ինչը ոչ սակագնային խոչընդոտները հաշվի առնելով՝ թանկացնում է վրացական արտադրանքը և չի ստեղծում արտահանման զգալի աճի պատկեր: ԵՄ միասնական շուկա արտահանումը, որը բնութագրվում է բարձր գնողունակությամբ՝ ավելի քան 502 միլիոն պոտենցյալ գնորդով, ենթադրում է հետևյալ նախապայմանների բավարարում. Չնայած «DCFTA»-ն ուժի մեջ մտնելուն, Եվրամիության շուկան բաց է միայն այն ապրանքների համար, որոնք համապատասխանում են Եվրոպայի շուկայի համար սահմանված ներքին կանոնակարգերին:

Հիմնական քննարկվելիք թեմաները

- Վրաստանի առևտրային քաղաքականություն (Առևտրային համաձայնագրեր և ռեժիմներ, առևտրի սակագնային և ոչ սակագնային խոչընդոտներ)
- Վրաստան-ԵՄ արտահանման դինամիկա (Առևտրի վիճակագրություն, ապրանքային կոդերի ներդաշնակ համակարգ, արտահանման ապրանքների դինամիկա, Եվրամիության հետ միասնական շուկա արտահանման ներուժ ունեցող սեկտորներ)
- Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի (DCFTA)՝ համաձայնագրի էությունը, հիմնական ուղղությունները, բացառությունները, որակի ենթակառուցվածքները, «DCFTA»-ի իրականացումը Վրաստանում
- Ինչպե՞ս օգտվել «DCFTA»-ի առավելություններից (Ի՞նչ պահանջների պետք է համապատասխանի ապրանքը, ի՞նչ ընթացակարգեր պիտի անցնի Եվրամիության շուկա հասնելու համար, ինչպե՞ս է կարելի ներգրավել հետաքրքրված մարդկանց)

Օգտակար աղբյուրներ

- Ազատ առևտուր Եվրամիության հետ <http://www.dcfta.gov.ge/>
- Ասոցացման հետքերով <http://asocireba.ge/>
- Ասոցացման համաձայնագրի ինտերակտիվ ուղեցույց <http://aa.ge/>
- Եվրամիության և Վրաստանի միջև հարաբերությունների ամրապնդում. Ի՞նչ, ինչու՞ և ինչպե՞ս http://www.3dcftas.eu/system/tdf/GEO%20Handbook%202nd_GEO%20ver.pdf?file=1&type=node&id=497&force=
- Ամեն ինչ՝ Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի վերաբերյալ <http://eugeorgia.info/ka/news/sofliis-meurneoba/3/>
- Kalo. <https://kalo.ge/videos>
- Ասոցացման մասին համաձայնագրի տեքստը (վրացերեն, արխազերեն, օսերեն, ադրբեջաներեն, հայերեն, անգլերեն) <http://www.parliament.ge/ge/gavigot-meti-evrokavshirtan-asocirebis-shetanxmehis-shesaxeb/associationagreement1>

3.2. Առանց վիզային ռեժիմ Եվրամիության և Շենգենի գոտու երկրների հետ

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ բարձրացնել մասնակիցների տեղեկացվածությունը Վրաստան-Եվրամիության միջև միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ, դասընթացի մասնակիցներին կտրամադրվի որակական և քանակական համապարփակ տեղեկատվություն Եվրամիության հետ ազատ վիզային ռեժիմի վերաբերյալ: Այս ամենը ներառում է վիզալիբերալիզացիայի գործողությունների ծրագրի հետ կապված բարեփոխումներ և դրանից բխող արտոնությունները ու հնարավորություններ Վրաստանի քաղաքացիների համար: Դասընթացի արդյունքում մասնակիցները անհրաժեշտ հմտություններ ձեռք կբերեն և կկարողանան համապատասխան տեղեկատվություն գտնել առանց վիզային ռեժիմի վերաբերյալ: Տեղեկատվածություն մակարդակի բարձրացումը իր հերթին կօգնի մասնակիցներին՝ ավելի քիչ դառնալ հակաարևմտյան քարոզչության զոհ և կկարողանան ստացած հմտություններն ու տեղեկատվությունը տարածել հանրության լայն շրջանակներում: Դասընթացի ժամանակ նաև ուշադրություն կդարձվի COVID-19-ի՝ Վրաստան-Եվրամիության միջև գործող առանց վիզային ռեժիմի հնարավոր ազդեցությանը:

Դասընթացի արդյունքները

Դասընթացից հետո մասնակիցները կկարողանան Վրաստան-Եվրամիություն միգրացիոն քաղաքականության և առանց մուտքի արտոնագրի ռեժիմի մասին որակական և քանակական տեղեկատվություն գտնել և վերլուծել: Դասընթացի մասնակիցները նաև կկարողանան գտած տեղեկատվության հիման վրա պայքարել հակաարևմտյան դիսկուրսի և հակաազատական տրամադրությունների հետ՝ հանրության տարբեր շերտերում: Դասընթացի մասնակիցների մոտ կզարգանան համապատասխան հմտությունները, կապված Եվրամիության միգրացիոն քաղաքականության և առանց մուտքի արտոնագրի ռեժիմի հետ կապված վիճակագրական տվյալների հետ և համապատասխան զեկույցներ կուսումնասիրեն: Նրանք նաև կկարողանան իրենց դերն ունենալ Առանց մուտքի արտոնագրի ռեժիմի հետ կապված՝ երկրի մասշտաբով մեկ տեղեկատվական արշավում, ինչը, իր հերթին, կնվազեցնի Եվրամիության չկանոնակարգված (ապօրինի) միգրացիան և առանց վիզայի ռեժիմի դադարեցման մեխանիզմի հնարավոր օգտագործումը կմինիմալիզացնի: Դասընթացը հնարավոր է ունենա մուլտիպլիկատոր էֆեկտ, ինչը ենթադրում է՝ մասնակիցների կողմից տեղեկատվության փոխանակում է լայնորեն տարածում:

Թեմայի նկարագրությունը

2017 թվականից կենսաչապական անձնագիր ունեցող Վրաստանի քաղաքացիները հնարավորություն ունեն կարճաժամկետ (մինչև 90 օր) այցերի համար մեկնել Եվրամիության և Շենգենի գոտու երկրներ: Եվրամիության կողմից նշված որոշմանը նախորդում էր Վրաստանի համար վիզայի լիբերալիզացիայի գործողությունների ծրագրի ներկայացումը, որը ենթադրում է միգրացիայի, անվտանգության, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից տարբեր տեսակի բարեփոխումների իրականացում և այդ բարեփոխումների հետևանքով հաստատված կայունության ապահովում:

Մինչև COVID-19-ի համաճարակը, Վրաստանի՝ մոտ մեկ միլիոն քաղաքացի օգտվել է Եվրամիության և Շենգենի գոտու երկներում առանց մուտքի արտոնագրի շրջագայելու իրավունքից: Վիզայի լիբերալիզացիայի գործողությունների ծրագիրը բաժանված է 4 մասի և այն ներառում է բարեփոխումների իրականացում սահմանի կառավարման, հավասարության, անձնական տվյալների, մարու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանման, կոռուպցիայի դեպ պայքարի և այլ ոլորտներ: 2014-2017 թվաաններին Վրաստանը ամբողջությամբ իրականացրել է վիզայի ազատականեցման գործողությունների ծրագրով նախատեսված բարեփոխումները, ինչը հետագայում կարճաժամկետ վիզաների չեղարկման նախապայման դարձավ:

Չնայած իրականացրած բարեփոխումների՝ Եվրամիությունը շարունակում է Վրաստանի կողմից իրականացված բարեփոխումների վերահսկումն ու ամեն տարի հրապարակում է «Վիզայի դադարեցման մեխանիզմի» զեկույց: Զեկույցում ներկայացված է ինչպես ձեռք բերված արդյունքները, այնպես էլ մարտահրավերները, ինչը մեծամասամբ վերաբերում է Եվրամիությունում և Շենգենյան գոտու երկրներում Վրաստանի քաղաքացիներից կազմված կազմակերպված հանցվոր խմբերով և անհիմն ապաստարան փնտրողներով: Հատկանշական է, որ ավելանում է Վրաստանի այն քաղաքացիների թիվը, որոնք ապաստարան են խնդրում Եվրամիության և Շենգենյան գոտու երկրներից: 2019 թվականին այս թիվը կազմել է 21 570, ինչը վերջին 9 տարվա ընթացքում ավելացել է 3 անգամ: Հետևաբար, առանց մուտքի արտոնագրի ռեժիմը մշտական չէ և հնարավոր է այն վերանայվի հաշվի առնելով Եվրամիության կողմից ընդունված Առանց մուտքի արտոնագրի տեղաշարժի դադարեցման մեխանիզմով նախատեսված պայմանների խախտումը:

Քննարկվող հիմնական հարցերը

- Վրաստան-Եվրամիություն հարաբերությունները միգրացիոն քաղաքականության տեսանկյունից
- Վիզաների դյուրացման համաձայնագիր
- Հետընդունման պայմանագիր
- Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիր
- Կարճաժամկետ վիզաների չեղարկում և դրա գործնական արդյունքները
- Աշխատանքային միգրացիա
- Շրջանաձև միգրացիա
- Ապաստան հայցողների հետ կապված մարտահրավերներ
- Առանց վիզայի ռեժիմի կասեցման մեխանիզմ
- COVID 19-ի ազդեցությունը Եվրամիություն-Վրաստան միգրացիոն քաղաքականության և պրակտիկայի վրա
- Վիճակագրական տվյալներ և Եվրամիության զեկույցներ

Օգտակար աղբյուրներ

- Եվրամիության սահմանային և ծովային պահպանման գործակալություն www.frontex.europa.eu
- Եվրահանձնաժողովի ներքին գործերի և միգրացիոն դիրեկտորատ <https://ec.europa.eu/home-affairs/>
- Եվրամիության ապաստարան հայցողների աջակցության գրասենյակ <https://www.easo.europa.eu/>
- Միգրացիոն հարցերով կառավարական հանձնաժողով http://migration.commission.ge/index.php?article_id=59&clang=0
- Վրաստանի` 2016-2020 թվականների միգրացիայի ռազմավարություն http://migration.commission.ge/files/ms_matsne_geo_06.08.18.pdf
- Վիզայի ազատականացման գործողությունների ծրագիր http://migration.commission.ge/files/savizo-liberalizaciis-samoqmedo-gegma_qartulad.pdf
- Եվրամիության և Վրաստանի միջև վիզաների դյուրացման մասին համաձայնագիր <http://migration.commission.ge/files/1.pdf>
- Վրաստանի և Եվրամիության միջև չարտոնված անձանց հետընդունման մասին համաձայնագիր http://migration.commission.ge/files/._2.pdf
- Եվրամիության 3-րդ զեկույցը (10/-7/2020) վիզայի ազատականացման կասեցման մեխանիզմի վերաբերյալ <https://bit.ly/20Gzgo7>
- Վիզայի ազատականացման կասեցման մեխանիզմի վերաբերյալ Եվրահանձնաժողովի մեխանիզմի վերաբերյալ փաստաթուղթ <https://bit.ly/2ZPvwq0>
- «Ինչ է պետք առանց մուտքի արտոնագրի համար. ամեն ինչ ինչ պետք է իմանանք մինչ ճանապարհորդելը» <https://bit.ly/39R52s3>

3.3. ԵՄ-ի հետ կրթական ծրագրեր

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է՝ մասնակիցներին ծանոթացնել թե ինչ հնարավորություններ կան Էրասմուսի ծրագրերի շրջանակներում և ինչպես են սովորում ու մասնակցում տարբեր ակտիվություններում ֆինանսավորվող կրթաթոշակներով: Դասընթացի ընթացքում մասնակիցները կարող են նաև կծանոթանան ներքին գործընթացներին, թե ինչպես են լրացնում հայտը, ինչպես հայտնվել մասնակիցների թվու և վերլուծել որքան շատ դրական կողմեր ունի Էրասմուս ծրագրերի մասնակցությունը:

Դասընթացի արդյունքները

Դասընթացի ավարտին մասնակիցները. կկարողանան գտնել ESC (European Solidarity Corp) վականսիաները և լրացնել հայտերը, կհմանան համալսարանի կիսամյակային փոխանակման ծրագրի շրջանակներում ում պետք է դիմել և գործընթացներ անցնել, կհմանան՝ համալսարանի ավարտից հետո ինչպես հայտնվել արտերկրում՝ մագիստրոսային ծրագրով, կհմանան, որտեղից տեղեկատվություն գտնել Էրասմուս ծրագրերի վերաբերյալ, կհմանան ում պետք է դիմել օգնության և հարցերի համար՝ Էրասմուսի ծրագրերի հետ կապված, կհմանան ինչպես գրել մոտիվացիոն նամակ և CV, կհանան թե ինչ հիմնական չափանիշների պետք է համապատասխանեն ծրագրի յուրաքանչյուր մասնակից:

Թեմայի նկարագրությունը

Էրասմուս + -ը Եվրամիության դրամաշնորհային ծրագիր է, որը իրականացնում է ծրագրեր կրթության, դասընթացների, երիտասարդության և սպորտի ոլորտներում: Դասընթացի ընթացքում կանդիդատներն 3 հիմնական ծրագրի.

Միջազգային կրեդիտ մոբիլություն (International Credit Mobility - ICM) - կարճաժամկետ փոխանակման ծրագիր բրձագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և ակադեմիկ/վարչական պերսոնալի համար: Փոխանակման ծրագրերը իրականացվում են Վրաստանի և Եվրոպայի (ծրագրի երկրների) համալսարանների միջև ստորագրված գործընկերային համաձայնագրի շրջանակներում: Ուսանողները պետք է լինեն բակալավրի, մագիստրոսի, դոկտորանտուրայի ուսանողներ, որպեսզի կարողանան իրականացնել մոբիլությունը:

Մագիստրոսական ծրագրեր եվրոպական համալսարաններում՝ միասնական մագիստրատուրային ծրագրեր - Եվրոպայի մի քանի երկրում համալսարանների կողմից համատեղ մշակված ծրագիր: Դիմորդը ծրագիրն ընտրում է անկախ՝ իր երկրում բակալավրը ավարտելուց հետո: Դիմորդը դիմումն ուղարկում է անհատական՝ ծրագիրը համակարգող համալսարան: Ընտրված թեկնածուն ընտրվում է մի քանի չափանիշներով:

ESC (European Solidarity Corp) - Եվրոպայի համերաշխության կորպուս - Ծրագրի նպատակն է՝ կամավորության միջոցով խթանել համերաշխությունը, որպես արժեք: Ավելացնել երիտասարդների ներգրավվածությունը տարբեր գործողություններում: Ծրագրի շրջանակներում ընտրված մասնակիցը 2 ամսից 1 տարի ժամակով մեկնում է արտասահման, կամավոր աշխատում է նախապես ընտրված կազմակերպությունում և փորձ է ձեռք բերում այն ոլորտում, որը իրեն առավել է հետաքրքրում:

Հիմնական քնարկվող թեմաները

- Ի՞նչ է նշանակում Էրասմուսը և ինչ հնարավորություններ կան Էրասմուսի շրջանակներում
- 3 ծրագրի քննարկում. Սեմեստրային փոխանակման, մագիստրոսային, Եվրոպայի համերաշխության կորպուս
- Խորհուրդներ և դիմելուց առաջ անհրաժեշտ հարցեր

Օգտակար աղբյուրներ

- Erasmus + Վրաստանի ազգային գրասենյակ <http://erasmusplus.org.ge/>
- Մագիստրատուրայի ծրագրերի ցանկ https://eacea.ec.europa.eu/erasmus-plus/library/emjmd-catalogue_en
- Էրասմուս ուսանողների միության ֆեյսբուքյան էջ <https://www.facebook.com/ESN.Tbilisi.ISU/>
- ESN Tbilisi-ի youto0be ալիք <https://www.youtube.com/channel/UCzRSAPhwKCottmUnueHOcDQ>
- ESC-ի մասին տեղեկատվություն https://europa.eu/youth/solidarity/faq_en




ՀԱՎԵԼՈՒՄ 1:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՑԻԿԼԸ

- Մասնակիցներից գնահատականներ ստանալ
- Մասնակիցների և կուրսի գնահատում
- Պոտենցիալ փոփոխությունները ի հայտ բերել

- Մասնակիցների անհրաժեշտությունների սահմանում
- Կազմակերպության նպատակների սահմանում
- Բովանդակության սահմանում
- Օպտիմալ օրինակի ընտրություն



- Դինամիկ դասընթացի ապահովում
- Մասնակիցների պահանջներին համապատասխանեցում

- Դասընթացի ընդհանուր բովանդակության սահմանում
- Յուրաքանչյուր տարածքի բովանդակության սահմանում
- Անհատական սեսիաների բաժանում
- Մեթոդների ընտրություն
- Նյութերի պատրաստում



ՀԱՎԵԼՈՒՄ 2:

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՒԱԶԱՓ

Գնահատման ձևաչափ

Դասընթացի թեման

Դասընթացի վայրը

Դասընթացի անվանումը

Դասընթացի ամսաթիվ

Դասընթացի բարձր չափանիշները պահպանելու համար մեզ համար կարևոր է ձեր գնահատման ձևաչափը: Խնդրում ենք մի քանի բոլոր տրամադրել և պատասխանել ստորև տրված հարցերին:

Բովանդակային մաս

1. Նյութը հասկանալի և կազմակերպված էր ներկայացված

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

2. Դասընթացը համապատասխանում էր նպատակներին և խնդիրներին

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

3. Դասընթացին ներկա գտնվելու իմ նպատակներն արդարացվեցին

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

4. Դասընթացի արդյունքում գիտելիքներս (անվանում) թեմայի վերաբերյալ ավելացան

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

5. Ստացած տեղեկատվությունը օգտակար կլինի հետագայում

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

Դասընթացավար

1. Դասընթացավարը լավ էր պատրաստված

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

2. Դասընթացավարը հասկանալի էր ներկայացնում թեման

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

3. Դասընթացավարը հարցերին ամբողջական էր պատասխանում

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

4. Դասընթացավարը ապահովում էր մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը քննարկումներին

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

Կազմակերպչական մաս

1. Հանդիպումը լավ էր կազմակերպված՝ բոլոր անհրաժեշտ պարագաներով

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

2. Դասընթացի վայրը կոմֆորտայն էր

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

3. Դասընթացի տևողությունը և ընդմիջումները բալանսավորված էին

1 Ամբողջովին համաձայն չեմ 2 3 4 5 ամբողջովին համաձայն եմ

Ամենից շատ ձեզ ինչ դուր եկավ

Ինչպես կարելի է բարելավել դասընթացը

Ինչպես եք ոգտագործելու դասընթացից ստացած գիտելիքները հետագայում

Այլ մեկնաբանություններ



ՀԱՎԵԼՎԱԾ 3:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ
ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դասընթացները պլանավորելիս և անկացնելիս դասընթացավարները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները

- Ուշադրություն դարձրեք, որ տրամադրված նյութի մեջ տեսական և գործնական տեղեկատվությունը հավասարակշռված կերպով լինի արտացոլված.
- Դասընթացը պլանավորելիս և անկացնելիս հաշվի առեք մասնակիցների անհատական կարիքներն ու շահերը
- Համոզվեք, որ պլանավորած դասընթացները կօգնեն արդյունքի հասնել: Դրա համար նախապես պարզեք, թե ովքեր են դասընթացի մասնակիցները և ինչ կարիքներ ու հետաքրքրություններ ունեն
- Դասընթացի պլանավորման ժամանակ օգտագործեք խառը տիպի սեսիաներ, այդ թվում. ներածություն, կանոնների ներածություն, հետադարձ կապ, եզրափակիչ մաս
- Իրատեսորեն գրեք նյութի քանակը, որպեսզի չգերազանցի նախատեսված ժամանակը
- Եղեք ճկուն և պատրաստ՝ անհրաժեշտության դեպքում որոշ թեմաներ բաց թողնելու կամ որոշ թեմաների համար ժամանակ ավելացնելու համար, եթե մասնակիցների համար որևէ կոնկրետ թեման դժվար հասկանալի է
- Համապատասխանեցրեք տեղեկատվության փոխանցման մեթոդները ձեր ուժեղ կողմերին, որպեսզի դասընթացը ավելի արդյունավետ լինի:
- Օգտագործեք տեղեկատվության տրամադրման խառը մեթոդներ, որպեսզի հաշվի առնված լինի մասնակիցների ուսման տարբեր մեթոդներն ու, հետևաբար, ակտիվորեն ներգրավվեն դասընթացին:
- Տրամադրեք լրացուցիչ նյութեր, որոնք մասնակիցներին իրականում անհրաժեշտ են կամ իրենք են պահանջում
- Օգտագործեք պարզ է հասկանալի լեզու, ինչպես դասընթացի ժամանակ, այնպես էլ տրամադրվող նյութերում
- Միշտ հիշեք դասընթացի նպատակն ու փորձեք չչեղվել հիմնական թեմաներից: Այնուամենայնիվ, եթե նկատում եք, որ որևէ թեման չի աշխատում, ճկուն եղեք և պատրաստ՝ փոփոխությունների համար:



ՀԱՎԵԼՈՒՄ 4:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

1.1. Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպեիզացիա. մարտահրավերներ և հեռանկարներ

Ակտիվություն 1: Ներածություն

Ընդհանուր քննարկում՝ Վրաստանի եվրոպական ինտեգրման վերաբերյալ

Դասընթացի առաջին մասում մասնակիցները կստանան տեղեկատվություն Վրաստանի եվրաինտեգրման գործընթացի, նրա նպատակների և կարողության մասին՝ երկրի արտաքին քաղաքականության մեջ: Ավելի կոնկրետ՝ մասնակիցները կծանոթանան Վրաստանի և Եվրամիության միջև հարաբերությունների դինամիկային՝ ըստ տարիներին, այդ թվում՝ կարևոր համաձայնագրերի (Ացոցացման համաձայնագիր և Խորը ու համապարփակ աազատ առևտրային գոտում մասին համաձայնագիր), Վրաստանի կողմից Եվրամիության հետ համագործակցության գործընթացում արված քայլերի ու ստացված օգուտների մասին: Նշված մասում մասնակիցները նաև կծանոթանան Վրաստանի հանրության՝ Եվրամիության նկատմամբ տրամադրություններին:

Ակտիվություն 2: Տեղեկատվական սեսիա

Վրաստանի քաղաքական մարտահրավերներն ու հեռանկարները եվրոպեիզացիայի ոլորտում

Այս բաժնում կքննարկվեն այն մարտահրավերները, որոնց բախվում է Վրաստանը եվրոպեիզացիայի գործընթացում: Հատուկ ուշադրություն կտրամադրվի հանրության մակարդակում առկա մարտահրավերներին, քանի որ եվրոինտեգրման գործընթացում նկատվու է վրաց հանրության աճող հոգնածություն՝ եվրոպական արժեքներից: Նշված հարցը քննարկելու ժամանակ, որպես օժանդակ նյութ կվերլուծվեն վիճակագրական տվյալներ հանրության տրամադրությունների մասին՝ կապված եվրաինտեգրման և եվրոպեիզացիայի հետ (Կովկասի բարոմետր, NDI-ի և IRI-ի հետազոտություններ): Եվս մեկ կարևոր մարտահրավեր, որին նույնպես ուշադրություն կդարձվի, վրաց և եվրոպական հանրությունների տարբերությունն է, ինչը կապված է հանրությունների միջև ինտերաքցիայի և գիտելիքների պակասի հետ: Բացի մարտահրավերներից՝ այս բաժնում մասնակիցները տեղեկատվություն կստանան Վրաստանի եվրոպեիզացման հեռանկարների մասին: Չնայած նրան, որ երկիրը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև, այն եվրաինտեգրման ուղղությամբ շատ ավելի ակտիվ է աշխատում, քան հետխորհրդային այլ երկրներ և փորձում է պահպանել գրավիտացիոն դիրքը՝ ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում:

Եվրոպական ինտեգրմանը հասնելու համար ձեռնարկված քայլերը

Եվրոպեիզացիայի ոլորտում երկրի մարտահրավերների ու հեռանկարները քննարկելուց հետո, մասնակիցներին տեղեկատվություն կտրամադրվի երկրի կողմից մինչ այս պահը արված քայլերի մասին՝ եվրաինտեգրման ուղղությամբ: Մասնավորապես, մասնակիցներին տեղեկատվություն կտրամադրվի Եվրամիության և Վրաստանի միջև համագործակցության շրջանակներում ստորագրված երկկողմ բազում քաղաքական համաձայնագրերի, Եվրամիության հետ առևտրի ոլորտում Վրաստանի կողմից ձեռնարկված քայլերի, առանց վիզային ռեժիմի ու վրաց բնակչության կողմից Եվրամիության հետ կապված իրազեկության բարձրացման ուղղությամբ արված քայլերի վերաբերյալ: Ինչպես նաև, մասնակիցները տեղեկատվություն կստանան եվրաինտեգրման գործընթացի շրջանակներում Վրաստանի կողմից իրականացված բարեփոխումների մասին՝ լավ կառավարման և դեմոկրատիզացյալ ուղղություններով:

ԵՄ անդամ պետությունների կողմից տեսնված Վրաստանի եվրաինտեգրման հեռանկարները

Դասընթացի նշված մասում մասնակիցները հնավարություն կունենան՝ այլ տեսանկյունից նայեն Վրաստանի եվրաինտեգրման հեռանկարներին և ծանոթանան ԵՄ անդամ երկրների տեսլականներին՝ նշված հարցի վերաբերյալ: Մասնավորապես, թե ինչպիսի՞ն է ԵՄ անդամ պետությունների տեսլականը Վրաստանի և վերջինիս եվրաինտեգրման ու եվրոպեիզացիայի վերաբերյալ, ինչպիսի՞ն են նրանց ընկալումներն ու սպասելիքները և արդյոք դրանք համընկնում են վրացական կողմի ընկալումներին ու սպասելիքներին: Նման քննարկումները կարևոր են, քանի որ Վրաստանում գոյություն ունի շատ թյուր գիտելիք եվրոպական իրականության և երկրի վերաբերյալ եվրոպական կողմի ընկալման մասին:

Վրաստանի եվրաինտեգրման մոդելները

Նշված բաժիժը բացի տեսականից պարունակում է նաև գործնական էլեմենտներ, քանի որ մասնակիցները կծանոթանան Վրաստանի եվրաինտեգրման տարբեր մոդելներին և հնարավորություն կունենան, դրանց համեմատության արդյունքում քննարկել գոյություն ունեցող մոդելների միջև նմանություններն ու տարբերությունները: Ինչպես նաև, մասնակիցները հնարավորություն կունենան քննարկել, թե որ մոդելն է ավելի արդյունավետ Վրաստանի համար: Հիմնական ուշադրությունը կտրամադրվի 2 մոդելին. Տարածաշրջանային և անհատական ինտեգրում և այս երկու մոդելների համեմատական քննարկում:

Ակտիվություն 3: Վերջնական մաս - խմբային աշխատանք

Դասընթացի վերջին մասում մասնակիցները բաժանվելու են մի քանի փոքր խմբերի և ամփոփեն ամբողջ դասընթացի ամբողջ ընթացքում ստացած տեղեկատվությունն ու կառանձնացնեն հիմնական խնդիրները: Ինչպես նաև, մասնակիցներին հավելյալ առցանց ռեսուրսներ կտրամադրվեն և ցանկության դեպքում կարող են ծանոթանալ հավելյալ երկրի եվրաինտեգրման գործընթացին և նրա ձեռքբերումների ու մարտահրավերների մասին:

1.2. Եվրոպայի հարևանության քաղաքականություն և Արևելյան գործընկերություն. Ի՞նչ են ենթադրում նշված ձևաչափերը Վրաստանի համար

Ակտիվություն 1: Քննարկում ԵՄ հարևանության քաղաքականության վերաբերյալ

Դասընթացի այս մասում մասնակիցներին տեղեկատվություն կտրամադրվեն դասընթացի նպատակների, կառուցվածքի ու արդյունքների վերաբերյալ: Ներածական մասում կքննարկվեն Եվրամիության հարևանության քաղաքականության մշակման պատմությունը, աշխարհաքաղաքական նպատակները և կարևորությունը: Դասընթացի նշված մասի շրջանակներում, մասնակիցներին կբացատրվի, թե ինչ է նշանակում Եվրոպայի Հարևանության քաղաքականության ձևաչափում մնալը Վրաստանի համար:

Ակտիվություն 2: Տեղեկատվական նստաշրջան/քննարկում - «Արևելյան գործընկերություն»

Դասընթացի նշված մասի շրջանակներում կքննարկվի Եվրամիության Արևելյան գործընկերության ձևաչափը: Մասնավորապես, ինչ քաղաքական գործընթացեր են խթանել նշված ձևաչափի մշակմանը, ինչպես նաև, Եվրամիության որ անդամ երկրներն են եղել նախաձեռնողները: Դրա հետ մեկտեղ կքննարկվեն թե ինչ է նշանակում նշված ձևաչափը, որ երկրներն են Վրաստանի հետ մեկտեղ նշված ձևաչափի մասնակիցները և ինչ նպատակ ունի այն: Դասընթացի նշված մասում կքննարկվի, թե ինչ է նշանակում Արևելյան գործընկերության ձևաչափում Վրաստանի մասնակցությունը քաղաքական, տնտեսական, հանրությունների միջև կապի հաստատման տեսանկյունից:

Ակտիվություն 3: Տեղեկատվության նստաշրջան/քննարկում - «Արևելյան գործընկերության ապագան»

Դասընթացի նշված մասում կքննարկվի Արևելյան գործընկերության գազաթնաժողովները և ձևաչափի զարգացման փուլերը, ինչպես նաև 2021 թվականի մարտին Արևելյան գործընկերության գազաթնաժողովը և հեռանկարները: Դասընթացի մասնակիցներին կբացատրվեն, թե ինչ տարբերություն կա Արևելյան գործընկերության պետությունների միջև, հատկապես քննարկումը կվերաբերի Վրաստանին, Մոլդովին, Ուկրաինայի քաղաքական նկրտումներին և ԵՄ անդամակցության ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Վերջում, դասընթացը նշված մասում կքննարկվեն Եվրամիության կողմից Արևելյան գործընկերության պետությունների համար, հատկապես Վրաստանի համար տրամադրված ֆինանսական աջակցությունը՝ COVID-19 համաճարակի դեպ պայքարի տեսանկյունից:

Ակտիվություն 4: Գործնական վարժություն

Նշված բաղադրիչի շրջանակներում կներկայացվեն գործնական վարժություններ, որոնք դասընթացի մասնակիցներին կօգնեն ուսումնասիրել և վերլուծել Արևելյան գործընկերության հիմնական ուղղությունները. Դրանք են. 1) Տնտեսական զարգացում և շուկայի հնարավորություններ; 2) Ինստիտուտների և լավ կառավարման ամրապնդում; 3) Կապի հաստատում, էներգաարդյունավետություն, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխություններ; 4) Մոբիլություն և ժողովրդի միջև կապ: Առաջին հերթին մասնակիցներին տեղեկատվություն կտրամադրվի նշված ուղղությունների վերաբերյալ, իսկ հետագայում մասնակիցները կբաժանվեն խմբերի (ըստ մասնակիցների քանակի) և նրանց վարժություններ կտրվի, որոնց շրջանակներում նրանց կհանձնարարվի Վրաստանի կողմից իրականացվող բարեփոխումները համապատասխանեցնել նախաձեռնության հիմնական ուղղություններին:

Ակտիվություն 5: Ամփոփում

Ամփոփման ժամանակ մասնակիցները հնարավորություն կունենան՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցեր տալ դասընթացավարին: Հետագայում դասընթացի շրջանակներում ստացված տեղեկատվությունը կամփոփեն: Դասընթացի ավարտին մասնակիցները տեղեկատվություն կստանան օգտակար աղբյուրների մասին, հատկապես այն հնավարությունների, որոնք առաջարկում է Արևելյան գործընկերության ձևաչափը վրաց երիտասարդներին:

2.1. Փոքրամասնությունների իրավունքներն ու պարտականությունները եվրոպական քաղաքականության համատեքստում

Ներածություն. Փոքրամասնությունների սահմանում Դասանթացը ներառում է դասախոսություններ և քննարկումներ

Գոյություն ունի էթնիկ և ազգային փոքրամասնությունները ոչ միանշանակ սահմանում: Դասընթացի այս մասում մասնակիցները կծանոթանան փոքրամասնությունների հասկացության միջազգային իրավական սահմանմանը, մասնավորապես, թե ինչպես են սահմանվում էթնիկ և ազգային փոքրամասնությունները, ի՞նչ տարբերություններ կան դրանց միջև, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և ինտեգրման ինչ միջազգային մոդելներ գոյություն ունեն: Մոդելները կքննարկվեն տարբեր երկրների փորձի և քաղաքական ավանդույթների օրինակներով: Չնայած ոչ միանշանակ մեկնաբանությանը պետությունների մեծամասնությունը կիսում է 1975 թվականին նախաձեռնած փոքրամասնությունների սահմանման աշխատանքային տարբերակը, որը ձևակերպված էր այսպես. «Փոքրամասնությունները խմբեր են, որոնք քանակով փոքրամասնություն են կազմում պետության մնացած բնակչության համեմատ: Նրանք ոչ դոմինանտ դիրքում են և որի անդամները՝ պետության քաղաքացիները, առանձնապես են մնացած բնակչությունից էթնի, կրոնական և լեզվաբանական առանձնահատկություններով և արտահայտում են, թեկուզ անուղղակիորեն, համերաշխության սեփական մշակույթը, ավանդույթներ, կրոնը թե լեզուն պահպանելու նպատակներով»:

Փոքրամասնությունները Վրաստանում

Դասընթացը ներառում է դասախոսություն և քննարկում

Դասընթացի այս մասը վերաբերում է էթնիկ և ազգայինփոքրամասնությունների իրավիճակին Վրաստանում: Մասնավորապես, ինչպիսին են մանրամասն վիճակագրական տվյալները և բնակեցման վայրը: Ինչպես նաև, ինչպիսի՞ն է փոքրամասնությունների ընկալումը պետության կողմից և փոքրամասնությունների քաղաքական ո՞ր միջազգային մոդելին է մոտ այն: Վրաստանի այժմյան օրենսդրությունը չի սահմանում «փոքրամասնություն» տերմինը: Փոքրամասնությունների ինտեգրման քաղաքականության սահմանման հիմնական փաստաթուղթը՝ Հանդուրժողականության և քաղաքական ինտեգրման ազգային հայեցակարգը սահմանում է, որ փոքրամասնությունների իրավունքն է՝ ընտրել վերաբերում են իրենք փոքրամասնություններին, թե ոչ: Այսինքն, այժմյան մոտեցմամբ, Վրաստանում փոքրամասնություն է համարվում բացի էթնիկ վրացուց բոլորը, ովքեր իրենց համարում են փոքրամասնություն, չնայած նրան, թե կոնկրետ խումբը ինչ քանակի է, կամ որքան ժամանակ է բնակվում երկրում:

Փոքրամասնությունների քաղաքականության կառավարման եվրոպական մեխանիզմներ

Դասընթացը ներառում է դասախոսություն և քննարկում

Դասընթացի այս մասում հիմնական ուշադրությունը դարձվում է եվրոպական միջազգային մեխանիզմների բնույթի և դրանց օգտագործմանը: Մանրամասն կներկայացվի Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի և Եվրամիության համապատասխան կարգավորումները: Կքննարկվեն հետևյալ մեխանիզմները. Եվրախորհրդի ազգային փոքրամասնությունների պահպանման կոմիտեի, Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի ազգային խարտիան, ԵԱՀԿ թեմատիկ առաջարկությունները փոքրամասնությունների պահպանման և ինտեգրման ոլորտում: Կքննարկվեն յուրաքանչյուր միջազգային մեխանիզմի հիմնական նպատակները, ինչպես նաև այն պրատկիտ փուլերը և կարգավորումները, որոնք ապահովում են այդ նպատակների իրագործումը մասնակից պետություններում:

Այս պահի դրությամբ Վրաստանը մասնակցում է միայն փոքրամասնությունների պահպանման եվրոպական կոնվենցիայում: Կոնվենցիան Եվրախորհրդի կողմից ընդունվել է 1995 թվականին: Այն բազմակողմանի փաստաթուղթ է, որը իրավական պարտավորություններ է ենթադրում և վերաբերում է ընդհանուր ազգային փոքրամասնությունների պահպանմանը: Նրա նպատակն է՝ պահպանել կոնվենցիան ստորագրած պետությունների տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքները: Կոնվենցիայի նպատակն է նաև աջակցել ազգային փոքրամասնությունների ամբողջական և իրական հավասարությանը այնպիսի պայմաններ ստեղծելու ճանապարհով, որոնք հնարավորություն են տալիս նրանք՝ պահպանել և զարգացնել սեփական մշակույթն ու ինքնությունը: Կոնվենցիայում ամրագրված հիմնական սկզբունքներն են. Փոքրամասնությունների քաղաքական ու հանրային ներգրավվածությունը, խաղաղ հավաքի ազատությունը, միավորումներ ստեղծելու ազատությունը, խոսքի ազատությունը, կարծիքի, խղճի և դավանանքի ազատությունը, լրատվամիջոցների հասանելիությունը, կրթության իրավունքը և այլն:

Եվրախորհրդի երկրորդ, իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան Վրաստանի կողմից ստորագրված չէ, թեև Եվրախորհուրդը, սեփական դիվանագիտական առաքելության և Ստրասբուրգում համապատասխան քարտուղարության միջոցով ակտիվորեն համագործակցում է Վրաստանի կառավարության և այլ հետազոտական կենտրոնների հետ՝ վավերացվող փաստաթուղթը ժամանակին պատրաստելու վերաբերյալ:

Եվրախորհրդի այս երկու փաստաթղթերից բացի նաև կարևոր միջազգային մեխանիզմ են ԵԱՀԿ շրջանակներում գոյություն ունեցող պարտավորությունները: Մասնավորապես, ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գերագույն կոմիսարի (HCNM) մանդատը: Այս կառույցը ԵԱՀԿ շրջանակներում ստեղծվել է 1992 թվականին, այն ունի դիվանագիտական ծանրաբեռնվածություն և աշխատում է հակամարտությունները կանխելու և նախազուգահեյն ուղղությամբ: ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գերագույն հանձնակատարի առաջարկությունները չունեն իրավաբանական պարտադրող բնույթ, չկա նաև դրանք վերահսկելու համակարգ: Այնուամենայնիվ նրանք քաղաքական առումով պարտավորեցնող են ԵԱՀԿ անդամ պետությունների համար և կարևոր նորմատիվ բերկետի դեր են խաղում այն պետությունների համար, որոնք ցանկանում են անդամակցել ԵՄ-ին:

Վրաստանի կողմից ստանձնած տեղական իրավական պարտավորությունները

Դասընթացը ներառում է դասախոսություն և քննարկում

Դասընթացի այս բաժնում կքննարկվեն փոքրամասնությունների պաշտպանության և ինտեգրման ուղղությամբ Վրաստանի կողմից ստանձնած տեղական պարտավորություններն ու դրանց իրականացման մեխանիզմները: Թե ինչ հաշվետվություն կա և ինչպիսին է այս գործընթացում տեղական՝ վրաց քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերն ու գործառույթը:

Վրաստանի ներքին օրենսդրությունն ու մի շարք իրավական նորմերը կոնրտե պարտավորություններ են սահմանում երկրին՝ կապված փոքրամասնությունների հետ: Փոքրամասնությունների քաղաքականության հիմնական կարգավորող փաստաթուղթը Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգն է և գործողությունների ծրագիրը, որը գործում է 2009 թվականից: Հայեցակարգի իրականացման հիմնական պատասխանատուն Վրաստանի Հաշտեցման և քաղաքացիական հավասարեցման հարցերով պետական նախարարի գրասենյակն է: Հայեցակարգը հիմնավ է հավասարության սկզբունքի և «Ավելի բազմազանություն՝ ավելի ինտեգրում» մոտեցման վրա: Փաստաթղթի ընդհանուր նպատակը մշակութային արժեքների և հանրության յուրաքանչյուր անդամի ինքնության պաշտպանումն է: Ռազմավարության փաստաթուղթը 4 հիմնական ուղղություն ունի. Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքում; Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորության ստեղծում; Որակյալ կրթության հասանելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում; Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանուրժող միջավայրի ապահովում:

Ռազմավարության գործողությունների ծրագիրը գրված է 5 տարի ժամկետով՝ համապատասխան պատասխանատու ինստիտուտների նշմամբ: Ռազմավարությունը նաև սահմանում է տարեկան գործողությունների ծրագիր, որը ներըռում է համապատասխան գնահատում և զեկույցների մեխանիզմներ: Ռազմավարությունը խթանում է մեծամասնության հետ ավելի շատ փոխազդեցություն, քանի որ քաղաքացիական ինտեգրումը ենթադրում է ամբողջ հանրության, նրա բոլոր անդամների ներգրավվածություն: Ռազմավարությամբ կառավարությունը նաև պարտավորվում է՝ պաշտպանել փոքր և խոցելի էթնիկ փոքրամասնությունների կրթական և իրավական շահերը, ինչպես նաև թույլ տալ իրենց մայրենի լեզուները ուսումնասիրեն բարձրագույն կրթական հաստատություններում:

Դասընթացի ժամանակ կներկայացվեն գործողությունների ծրագրերի և ռազմավարության հետ կապված դժվարությունները:

Դասընթացի ամփոփում

Դասընթացի վերջում մասնակիցներին մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի փոքրամասնությունների հետ կապված օգտակար ռեսուրսների վերաբերյալ: Ինչպես նաև կամփոփվեն փոքրամասնությունների հետ կապված Վրաստանում առկա մոտեցումները, ինչպես պետության, այնպես էլ այլ դերակատարների կողմից: Վերլուծվելու է նաև փոքրամասնությունների իրավիճակը Վրաստանում՝ եվրոպական քաղաքականության համատեքստում:

3.1. Ազատ առևտուր Եվրամիության հետ

Ակտիվություն 1 - Քննարկում առևտրային քաղաքականության վերաբերյալ

Ակտիվություն 2 - Տեղեկատվական դասընթաց - Բացատրական մեթոդ

Դասընթացավարը նյութը ներկայացնելիս կոնկրետ օրինակներ է բերում, որով մանրամասն կքննարկվի նշված թեման:

Վրաստանը ներկայումս ունի աշխարհում ամենաազատական արտաքին առևտրային քաղաքականություններից մեկը, ինչը ենթադրում է արտաքին առևտրի պարզեցված ռեժիմ և մաքսային ընթացակարգեր, ներմուծման ցածր սակագներ և նվազագույն ոչ սակագնային կարգավորում: Վրաստանը կվոտաներ չի սահմանում ներմուծման և արտահանման վրա; Վրաստանից արտահանումն ու վերաարտահանումն ազատվում են մաքսատուրքերից; արտահանումը չի հարկվում ԱԱՀ-ով և ակցիզային հարկով (Դրանց վճարվում են նպատակակետ երկրում); 0% ներմուծման հարկի դրույքաչափը տարածվում է ապրանքների մոտ 80% վրա, մնացածը հարկվում են 5 և 12% իրավական դրույքաչափերով, ինչպես նաև հատուկ դրույքաչափերով (ալկոհոլային խմիչքներն ու մեքենաները):

Առևտրային համաձայնագրեր և ռեժիմներ

Հիմնական

- Այն երկրների հետ, որոնց հետ Վրաստանը չունի երկկողմ և բազմակողմանի համաձայնագրերի վրա հիմնված արտոնյալ առևտրային ռեժիմ
- Միջազգային կազմակերպությունների անդամակցությունից ելնելով արտոնյալ առևտրային հարաբերություններ

Արտոնյալ

- Արտոնյալ ռեժիմ - Վրաստանի առևտրային գործընկերների մեծ մասը Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ են և հետևաբար, ԱՀԿ անդամ երկրների հետ (164) առևտրական հարաբերություններն իրականացվում են Արտոնյալ ռեժիմով: Այն ենթադրում է ԱՀԿ անդամ երկրների հետ ցածր սակագներ:
- Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP) - Արտոնությունների գեներացման համակարգի հիմնական էությունը տնտեսական զարգած երկրների կողմից տնտեսապես համեմատաբար թույլ երկրներին օգնություն ցուցաբերելն է արտահանման զարգացման տեսանկյունից: Այս նպատակով զարգացած երկրների արտոնությունների ընդհանրացման համակարգում շահառուներին միակողմանիորեն (առանց փոխադարձ օգուտներ ստանալու) որոշակի արտոնություններ են տրամադրում արտաքին առևտրում: 2005 թվականի հուլիսի 1-ից գործում է Եվրամիության GSP-ի սխեմայի հավելյալ արտոնությունների այսպես կոչված Արտոնությունների հիմնական համակարգ - GSP+: Այս համակարգը թույլ է տալիս միակողմանիորեն իջեցնել կամ վերացնել առևտրային սակագները ինչը ենթադրում է, որ վրացական ծագմամբ մոտ 7200 ապրանքատեսակ GSP երկրներ է արտահանվում զրոյական մաքսային դույքաչափով:
- Ազատ առևտրի ռեժիմներ. (ԱՊՀ երկրների հետ (բազմակողմանի), Թուրքիայի հետ (երկկողմ), EFTA (Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն) - Ապրանքների առևտուր DCFTA, Չինաստանի և Հոնկոնգի հետ) - Առվտուր առանց սակագների, առանց տարբեր բյուրոկրատական բարյերների (Բացառությամբ ոչ սակագնային խոչընդոտների):

Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի - DCFTA Ի՞նչ է ենթադրում խորը և համապարփակ ազատ առևտրի գորին

Խորը և համապարփակ ազատ առևտրի գորին երկիրը տեղափոխում է արտոնյալ առևտրային ռեժիմ և հնարավորություն ստեղծում՝ մեծացնել շուկայի հասանելիությունը Վրաստանի և ԵՄ-ի միջև, ինչը հիմնված է ներդաշնակեցված կանոնակարգերի վրա: Մասնավորապես, DCFTA-ն հնարավորություն է տալիս վրաստանցի ձեռնարկատերերին՝ իրենց արտադրանքը տեղավորել աշխարհի ամենախոշոր շուկաներից մեկում՝ Եվրամիության միասնական շուկայում՝ առանց սակագնային արգելքների և քվոտաների:

Ապրանքների առևտրի պայմանները

- **Արտահանում.** Կողմերից ոչ մեկը իրավունք չունի ապրանքերի արտահանման վրա մաքսային կամ համարժեք այլ հարկեր սահմանել

- **Ներկրում.**

Վրաստանում. Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց ևեթ, Վրաստանում վերացվել են Եվրամիությունում ծագող ապրանքների ներմուծման մաքսատուրքերը

Եվրամիությունում. Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուն պես Եվրամիությունում վերացվել են վրացական ծագում ունեցող ապրանքների ներմուծման մաքսատուրքերը, դրա հետ մեկտեղ Վրաստանից Եվրամիություն ներկրված ապրանքների մի մասը վրա հետևյալ միջոցառումներն են սահմանվել.

- Սխտորի քվոտա (Տարեկան ներմուծման քվոտա` 220 տոննա)
- Եվրամիության «մուտքի գին» (entry price - ad valorem free) - 28 տեսակի գյուղատնտեսական ապրանքների (ընդհանուր արտադրանքի 0.3%) Եվրամիություն «մուտքի գործելու գին» է գործում, ինչը այս ապրանքատեսակների ներմուծման նվազագույն գնի սահմանում է ենթադրում: Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուն պես «մուտքի գին» արժեքային բաղադրիչը վերացվեց և մնաց միայն հատուկ մաքսատուրք: Եթե Վրաստանում արտադրված ապրանքների ապրանքագրային գինը Եվրամիություն ներմուծելու, ԵՄ կողմից սահմանված ֆիքսված գնից ծածր է, ներմուծողը հատուկ մաքսատուրք պետք է վճարի, իսկ եթե հավասար է կամ ավելի բարձր, այդ դեպքում, հատուկ մաքսատուրքա նույնպես վերացվում է:
- Կեղծելու դեմ մեխանիզմ (anti-circumvention mechanism) - գյուղատնտեսական և սննդամթերքի վերամշակման ապրանքների 277 տեսակ (ընդհանուր արտադրության 3%) կեղծելու դեմ մեխանիզմի է ենթակա: Երբ օրացուցային տարվա սկզբից կեղծման դեմ մեխանիզմի ենթակա մեկ կամ ավել ապրանքատեսակի ներկրումը կհաստնի ֆիքսված քանակի 70%-ի, Եվրահանձնաժողովը կտեղեկացնի Վրաստանի կառավարությանը կոնկրետ ապրանքի ներկրման ծավալի մասին:

Վրաստանը հնարավորություն ունի Եվրամիությանը ներկայացնենել արտահանման հնարավոր գերաճած պաճառաբանված հիմնավորում (օրինակ` արտադրության ծավալի աճ):

Նման դեպքում Վրաստանը կարող է ԵՄ արտահանել սահմանվածից ավելի շատ քանակությամբ ապրանքներ` առանց մաքսատուրքի.

Ի տարբերություն Վրաստանի կողմից ստորագրված այլ ազատ առևտրի համաձայնագրերի, DCFTA-ն ենթադրում է ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների առևտրի ազատականացում: Բացի դրանից, DCFTA ընդգրկում է առևտրի հետ կապված հարցերի լայն շրջանակ (օր.` սննդի անվտանգություն, մրցակցության քաղաքականություն, մտավոր սեփականություն պաշտպանություն, ֆինանսական ծառայություններ և այլն) և ենթադրում է առևտրի հետ կապված Վրաստանի օրենսդրության աստիճանական մերձեցում ԵՄ օրենսդրությանը:

DCFTA-ն ներառում է հետևյալ գլուխները

- Ապրանքների առևտուր
- Առևտրի պաշտպանման երաշխիքներ
- Ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման և համապատասխանության գնահատման տեխնիկական խոչընդոտներ
- Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ
- Մաքսային և առևտրի խթանում
- Հիմնում, ծառայությունների առևտուր և էլեկտրոնային առևտուր
- Ընթացիկ վճարումներ և կապիտալի տեղաշարժեր
- Պետական գնումներ
- Մտավոր սեփականության իրավունքներ
- Մրցակցություն
- Էներգետիկայի ոլորտում առևտրի հետ կապված դրույթներ
- Թափանցիկություն
- Առևտուր և կայուն զարգացում
- Վեճերի լուծում
- Մոտեցման ընդհանուր դրույթներ

Ակտիվություն 3 - Խմբային աշխատանք

Դասընթացավարը մասնակիցներին ներկայացնում է դինամիկայի տարբեր գործիքներ և խմբային առաջադրանքներ է տալիս: Խմբի անդամները ըտրում են արտահանման ներուժ ունեցող ապրանքատեսակ, գտնում են ապրանքների ծածագիրը և արտահանման նշանակության երկրներում տարբեր տարիների դինամիկան են տեսնում, ինչպես նաև արտահանման հիմնական սակագնային և ոչ սակագնային պահանջները:

3.2. Առանց վիզայի ռեժիմ ԵՄ և Շենգենյան գոտու երկրների հետ

Ներածական մաս - Տեղեկատվական սեսիա

Դասընթացի այս մասում մասնակիցներին տեղեկատվություն կտրամադրվի Վրաստանի քաղաքացիների՝ ԵՄ էմիգրացիայի հետ կապված միջազգային պահպանության և ապօրինի միգրացիայի հետ կապված: Տեղեկատվությունը ներառում է Վրաստանի և Եվրամիության միգրացիայի ոլորտում առկա օրենսդրությանը և դրա վավերականությանը: Հիմնական տեղեկատվություն կտրամադրվի երկրի տնտեսության մեջ միգրացիայի դերի վերաբերյալ (տրանսդերտների վիճակագրություն և դրանց հարաբերակցությունը օտարերկրյա ուղղակի ներդրումների հետ և երկրի ՀՆԱ-ի մասնաբաժինը): Բացի այդ, կներկայացվի փոքր պատմական էքսկուրս, որը կնկարագրի Վրաստան-ԵՄ հարաբերությունները՝ միգրացիայի ոլորտում (օր.՝ վիզաների դյուրացում, ռեադմիսիա, շրջանաձև միգրացիոն սխեմաներ և այլն): Ներածական մասը նաև ներառում է մասնակիցներին աշխատանքային միգրացիայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Վիզաների ազատականացման մաս - Տեղեկատվական սեսիա

Նշված բաժինը վերաբերում է վիզաների ազատականացման գործընթացին և ներառում է վիզաների երկխոսության մեկնարկից մինչև վիզայի ազատականացումը ընկած ժամանակահատվածը: Այս բաժնում դասընթացավարն ու մասնակիցները ինտերակցիա կունենան այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսին է վիզայի ազատականացման գործողությունների ծրագրով ենթադրվող ակտիվություններն ու իրականացումը: Կներկայացվեն կոնկրետ օրինակներ և դրանց ազդեցությունը երկրի ժողովրդավարության գործընթացի վրա (օր.՝ անձնական դվյալների պաշտպանման մասին օրենսդրության ընդունում և կատարելագործում, հակախտրականության օրենքի ընդունում և դրա անհրաժեշտությունը, այսպես կոչված «Կանաչ սահմաններին» առկա ենթակառուցվածքների բարելավում, փաստաթղթերի անվտանգություն և այլն): Առանց վիզայի ճանապարհորդությունն ու դրա ազդեցությունը այսպես կոչված բռազավթած տարածքներում բնակվող բնակչության վրա:

ԵՄ-ում և Շենգենյան տարածքում օրինական աշխատանք - քննարկում

Դասընթացի երրորդ մասը վերաբերում է Եվրամիության և Շենգենյան գոտու երկրներում օրինական աշխատանքի ձևերին: Մասնավորապես, նշված բաժնում կքննարկվեն շրջանաձև միգրացիայի սխեմաներն ու գործնականում դրանց կիրառմանը վերաբերող հարցեր: Կիսուսվի նաև գործող օրենսդրական դաշտի մասին: Աշխատանքային միգրացիայի տեսանկյունից հատուկ ուշադրություն կտրամադրվի ԵՄ անդամ չհանդիսացող երկրների վրա (օրինակ՝ Թուրքիա և Ռուսաստան): Այս հարցը քննարկելու նաև ուշադրություն կդարձվի COVID 19 տարածման հետ կապված գլոբալ համավարակին և դրա ազդեցությանը՝ ինչպես աշխատանքային միգրացիայի, այնպես էլ երկրի տնտեսության վրա:

Գործնական տեղեկատվություն - Վիզայի ազատականացումից հետո ԵՄ և Շենգենյան գոտու երկրներում - քննարկում

Այս բաժնում մասնակիցները գործնական տեղեկատվություն կստանան թե որ դեպքում է Վրաստանի քաղաքացուն հնարավորություն տրվում հատել ԵՄ և Շենգենյան գոտու սահմանը: Մասնավորապես, տեղեկատվություն կտրամադրվի սահմանը հատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ: Ինչպես նաև, սույն բաժնում կքննարկվի առանց վիզայի ռեժիմի ազդեցությանը ինչպես նպատակակետ, այնպես էլ ծագման երկրների վրա:

Եզրափակիչ մաս - Տեղեկատվական սեսիա և քննարկում

Վերջին բաժնում կամփոփվեն այն գիտելիքներն ու հմտությունները որոնք մասնակիցները ձեռք կբերեն դասընթացների ընթացքում: Դրա հետ մեկտեղ, նրանց տեղեկատվություն կտրամադրվի օգտակար աղբյուրների վերաբերյալ: Ինչպես նաև, կքննարկվի վիզայի ազատականացումը կասեցնելու մեխանիզմն ու դրա հետ կապված հնարավոր ռիսկերը:

3.3. ԵՄ-ի հետ կրթական ծրագրեր

Ներածական մաս

Մասնակիցների ծանոթացում, դասըթացի նպատակներին ծանոթացում և մասնակիցների սպասումների սահմանում: Տեսական մասի համար նախապատրաստում էրասմուսի ծրագրերի մասին մասնակիցներին հարց-պատասխան ակտիվության միջոցով:

Միջազգային կրեդիտ մոբիլություն (International Credit Mobility - ICM)

Տեղեկատվական սեսիա և էներջայզեր

Միջազգային կրեդիտ մոբիլությունը (International Credit Mobility - ICM) - կարճաժամկետ փոխանակման ծրագիր է բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողների և ակադեմիական/վարչական անձնակազմի համար: Փոխանակման ծրագրերն իրականացվում են Վրաստանի և Եվրոպայի (Ծրագրի երկրների) համալսարանների միջև ստորագրված գործընկերային համաձայնագրերի շրջանակներում: Ուսանողը պետք է լինի բակալավրի, մագիստրատուրայի կամ դոկտորանտուրայի ուսանող, որպեսզի կարողանա մասնակցել Միջազգային կրեդիտ մոբիլությանը: Ուսանողը նախ իր համալսարանում ներքին մրցույթի է մասնակցում և հետագայում ընդունող համալսարանում: Յուրաքանչյուր ուսանող հնարավորություն ունի 12 ամսով դրամաշնորհ ստանալ: Ուսանողը պետք է գրանցված լինի բարձրագույն ուսումնական հաստատությունում և պետք է ներգրավված լինի ուսումնական գործանթացում, որը, ի վերջո, նրան ակադեմիական որակում կամ բարձրագույն մակարդակի որակավորում (դոկտորանտի որակավորումը ներառյալ) կտրամադրի): Մոբիլության շրջանակներում ծրագիրը ամբողջովին փոխհատուցում է ուսման վարձը և ճանապարհածախսը: Բացի այդ, ուսանողը 800-900 (կախված ընդունող երկրից) եվրոյի սահմաններում կրթաթոշակ կստանա:

Մոբիլության համար անհրաժեշտ փաստաթղթերն են

- CV - ցանկալի է Europass ձևաչափով
- Ուսանողի ծանուցագիր
- Լեզվի իմացության վկայագիր (որոշ դեպքերում լեզվի քննություն է անցքացվում համալսարանում
- Մոտիվացիոն նամակ
- Արդեն անցած առարկաների ցանկ՝ կրեդիտները և գնահատականները ներառյալ (տրվում է համալսարանի կողմից) Որոշ դեպքերում լրացուցիչ երաշխավորագիր են պահանջում պրոֆեսորներից:

Համատեղ մագիստրոսական ծրագրեր (JMD) Տեղեկատվականս եսիա և աշխատանք զույգերով

Համատեղ մագիստրոսական ծրագրերը եվրոպական մի քանի երկրների համալսարանների կողմից համատեղ մշակված ծրագիր է: Դիմորդը ծրագիրն ընտրում է ինքնուրույն՝ բակալավիրատի ծրագիրն ավարտելուց հետո: Դիմորդը դիմումն անհատապես ներկայացնում է անմիջապես ծրագրի համակարգող համալսարան: Ընտրված թեկնածուն ընտրվում է մի քանի չափանիշներով:

Ո՞վ կարող է մասնակցել ծրագրին

- Յուրաքանչյուր ոք, ով ունի բակալվրի աստիճան(կամ բակալավրի վերջին կուրսում է սովորում)
- Տարիքային սահմանափակում չկա
- Ուսանողի ակտիվ կարգավիճակը անհրաժեշտ չէ
- Նախկինում էրազմուս+ կրթաթոշակը բակալավրիատի կամ մագիստրատուրայի աստիճանում խոչընդոտ չէ

Ուսման գործընթացը տեղի է ունենում մագիստրոսական ծրագրին մասնակից առնվազն երկու եվրոպական համալսարանում (Եվրոպայի ներսում ճանապարհածախսը փոխհատուցվում է): Մագիստրոսական ծրագրի ծավալը կարող է լինել 120, 90 և 60 ECTS կրեդիտ, հետևաբար, ուսման տևողությունը կարող է տատանվել 1-2 տարի: Մագիստրոսական ծրագրի ավարտից հետո տրվում է համատեղ (Joint Degree) կամ բազմամակարտակ (Multiple Degree) գիտական աստիճան: Արտերկրում ստացված գիտական աստիճանների ճանաչման գործընթացը Վրաստանում իրականացնում է Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնը (www.eqe.ge):

Մրցույթին մասնակցելու կանոնները

- Մեկ դիմորդ միաժամանակ կարող է առավելագույնս 3 ծրագրի դիմել (մեկ մրցույթի շրջանակներում)
- Դիմորդը դիմումն անհատապես ներկայացնում է անմիջապես ծրագրի համակարգող համալսարան (կոնտակտային տվյալները ներկայացված են կոնկրետ ծրագրի կայք էջում): Դիմումը իրականացվում է առցանց: Նախապես պետք է պարզեք բոլոր մանրամասները համակարգող համալսարանի հետ, քանի որ մրցույթի կանոնները կարող են տարբերվել՝ կախված ծրագրերից: Կարևոր է հաշվի առնեք, որ.
- Չնայած ընդհանուր հակտանիշներին, բոլոր ծրագրերն անհատական պահանջներ ունեն - Անպայման ստուգեք ծրագրի մանրամասները կայքէջում: Հավելյալ դիմեք ծրագրի կոնտակտային անձին (տեղեկատվությունը տես ծրագրի կայքում)
- Ընդունելությունը հայտարարվում է երկու անգամ - մեկ անգամ կրթաթողակ փնտրողների համար (Scholarship seekers) և մեկ անգամ նրանց համար, ովքեր կրթաթոշակի ակրիք չունեն և մտադիր են ֆինանսավորել իրենց ուսումը: Վերջնաժամկետները կարող են տարբեր լինել:

- Մենք չենք կարող մեր կայքում հրապարակել յուրաքանչյուր մահգատրոսական ծրագրերի վերջնաժամկետները (100-ից ավել ծրագիր), այնպես որ դիմորդը պետք է հետևի իրեն հտեքրքրող ծրագրերի կայքերին:
- Սովորաբար, ընդունելությունը հայտարարվում է աշնանը, իսկ փաստաթղթերը նախապատրաստելու համար 3-5 ամիս ժամանակ է տրվում: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետներն են՝ ուշ աշունը, կամ հաջորդ տարվա հունվար-մարտը: Կրթաթոշակի ստացման վերաբերյալ ծանուցագիրը ամենաուշը լինում է Մայիսին: Ուսումը սկսվում է օգոստոս-հոկտեմբերին (կախված ծրագրից):

Ծրագրին մասնակցելու համար անրաժեշտ փաստաթղթերը

- Մոտիվացիոն նամակ
- Դիմումի ձև
- Անգլերեն լեզվի իմացության վկայական (IELTS, TOEFL...)
- Բեկոմենդացիոն նամակ (գերադասելի է գործունեության տարբեր ոլորտներից)
- CV
- Դիպլոմ + Դիպլոմի հավելում
- Մնացածը ըստ ծրագրի պահանջների

Գործնական մաս: Ինչպես լրացնել մոտիվացիոն նամակն ու CV-ն

Եվրոպայի համերաշխության կորպուս (ESC)


Տեղեկատվական սեսիա

Եվրոպայի համերաշխության կորպուսի նպատակն է կամավորության ճանապարհով խթանել համերաշխությունը որպես արժեք, մեծացնել երիտասարդների ներգրավվածությունը տարբեր գործողություններում: Ծրագրի շրջանակներում ընտրված մասնակիցը 2 ամսից 1 տարի ժամանակով մեկնում է արտերկիր, կամավոր աշխատում է նախապես ընտրված կազմակերպությունում և փորձ է ստանում իրեն հետաքրքրող ոլորտում: Եվրոպայի համերաշխության կորպուսը ներառում է հետևյալ ծրագրերը. Կամավորություն, համերաշխության ծրագրեր, պրակտիկա, զբաղվածություն

Վրաստանի քաղաքացիները իրավունք ունեն մասնակցել միայն ESC-ի կամավորական ակտիվություններին:

Այն մարդիկ, ովքեր ESC-ի նախորդ EVS (European Volunteering Service) ծրագրին մասնակցել են 2 ամսից ավելի ժամկետով, հնարավորություն չեն ունենա մասնակցել ծրագրին: Ծրագրին կարող են մասնակցել 18-30 տարեկան երիտասարդները՝ 2-12 ամիս ժամկետով: Նրանք կարող են կամավոր աշխատել տարբեր կազմակերպություններում, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հաստատություններում:

Ստորև ծանոթացեք ցանկին, թե որ ուղղությամբ կարող եք մասնակցել ESC ծրագրին: Դիմումը լրացնելու ժամանակ, յուրաքանչյուր ծրագրին տեղեկատվություն կստանաք, թե ինչի մասին է այդ ծրագիրը: Դրանք կարող են լինել.



Եթե դուք որոշեք մասնակցել ESC ծրագրին, ապա ձեզ հարկավոր է ինչպես ընդունող (Թափուր աշխատատեղ հայտարարող) այնպես էլ ուղարկող (Վրաստանից) կազմակերպություն:

Ուղարկող/աջակցող կազմակերպության պատասխանատվությունները

- Նախապատրաստում/վերապատրաստում, խորհրդակցություն
- Ընդունող կազմակերպության և դիորդի միջև միջնորդի դերի ստանձնում
- Վիզա, ապահովագրություն և այլ փաստաթղթերի ապահովում

Ընդունող/հյուրընկալող կազմակերպության պատասխանատվությունները

- Կամավորի ընտրություն, նրա հետ կոմունիկացիա
- Ամսական եկամուտ, բնակարան և այլ ծախսերի ապահովում
- Ծրագրի բոլոր փուլերում աջակցություն կամավորին

Եզրափակիչ մաս. Ամփոփում և ընդհանուր քննարկում

